

ՀՀ կրթության և գիտության նախարարություն
Երևանի ճարտարապետության և շինարարության
պետական համալսարան

Հասմիկ Արշալույսի Մելիքսեթյան

ՃԱՐՏԱՐԱՊԵՏ ՏԻՐԱՆ ՄԱՐՈՒԹՅԱՆԻ
ՍԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԺԸ. 00.01 – «ճարտարապետություն»
մասնագիտությամբ ճարտարապետության բեկնածուի
գիտական աստիճանի հայցման ատենախոսության

Ս Ե Ղ Մ Ա Գ Ի Ր

Երևան 2004

Министерство образования и науки РА
Ереванский государственный университет архитектуры и
строительства

Меликсетян Асмик Аршалуйсовна

ТВОРЧЕСКОЕ НАСЛЕДИЕ
АРХИТЕКТОРА ТИРАНА МАРУТЯНА

А В Т О Р Е Ф Е Р А Т

Диссертации на соискание ученой степени
кандидата архитектуры по специальности
18.00.01 - «Архитектура»

Ереван 2004

Ատենախոսության թեման հաստատվել է Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանում:

Գիտական դեկավար՝ ճարտ.
դոկտոր, ԴՅԱ թղթակից անդամ
Պաշտոնական ընդդիմախոսներ՝
ճարտ. դոկտոր, պրոֆեսոր
ճարտ. թեկնածու, դոցենտ
Առաջատար կազմակերպություն


Գառնիկ ՇԱԽԿՅԱՆ
Արշավիր ԹՈՐԱՄԱՆՅԱՆ
Արտակ ԴՈՒՆՅԱՆ
ՀՀ քաղաքաշինության
նախարարության
ճարտարապետության ազգային
թանգարան-ինստիտուտ

Պաշտպանությունը կայանալու է 2004թ. փետրվարի 25-ին, ժամը 14⁰⁰-ին Երևանի ճարտարապետության և շինարարության պետական համալսարանի 029 մասնագիտական խորհրդի նիստում՝ 375009, Երևան, Տեղյան 105 հասցեով:

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ԵՃՇՊՀ գրադարանում:

Սեղմագիրն առաքվել է 2004թ. հունվարի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
ճարտարապետության թեկնածու,
դոցենտ, ԴՅԱ թղթակից անդամ

 *S. ՍՄՐԵՂՅԱՆ*

Тема диссертации утверждена в Ереванском государственном университете архитектуры и строительства.

Научный руководитель: доктор
архитектуры, чл. корр. ИАА
Официальные оппоненты:
доктор архитектуры, профессор
кандидат архитектуры, доцент
Ведущая организация:

Гарник ШАХКЯН
Аршавир ТОРАМАНЯН
Артак ГУЛЯН
Национальный музей-институт
архитектуры министерства
градостроительства РА

Защита диссертации состоится 25 февраля в 14⁰⁰ часов на заседании специализированного совета 029 Ереванского государственного университета архитектуры и строительства по адресу 375009, г.Ереван, ул.Теряна 105.

С диссертацией можно ознакомиться в библиотеке ЕРГУАС.

Автореферат разослан 24 января 2004г.

Ученый секретарь спец. совета
кандидат архитектуры,
доцент, чл. корр. ИАА

 *T. ԲԱՐՏԵԳՅԱՆ*

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Թեմայի արդիականությունը: ճարտարապետության վարպետների ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունը կարևոր նշանակություն ունի ինչպես ժամանակի ճարտարապետության զարգացման խնդիրների, այնպես էլ առանձին ճարտարապետների գործունեության առանձնահատկությունների իմացության համար, ինչը շատ անհրաժեշտ է ճարտարապետական ավանդույթների ժառանգորդական փոխանցման, ճարտարապետների նոր սերնդի դաստիարակության, ճարտարապետական ազգային դպրոցների զարգացման, նաև նրանց ապրած դարաշրջանների մշակութային, սոցիալ-տնտեսական, շինարարական, քաղաքաշինական և այլ խնդիրների առումով:

Չնայած ճարտարապետների գործունեության վերաբերյալ առկա մի շարք ուսումնասիրություններին և հրապարակումներին, հայ ճարտարապետների գործունեությունը և ժառանգությունը դեռևս բավարար չափով չի ուսումնասիրված և հրապարակված հատկապես, երբ խոսքը վերաբերում է այն ճարտարապետներին, որոնց գործունեությունը նշանավորվել է առավելապես ոչ հասարակական կամ ոչ բնակելի շենքերի նախագծումով, ասենք՝ արդյունաբերական, քաղաքաշինական, հիդրոտեխնիկական, ինժեներական և այլ կառույցների գծով: Մասնավորապես այնպիսի ոլորտ, ինչպիսին է հիդրոտեխնիկական կառույցների ճարտարապետությունը, որի զարգացմանն է հիմնականում իր նախագծային գործունեությունը նվիրել ճարտարապետության դոկտոր, ՀՀ վաստակավոր շինարար Տիրան Մարությանը (ծնվ. 1911թ.), չի ուսումնասիրված, կամ գրեթե չի ուսումնասիրված:

Հայաստանի Հանրապետության տարածքում կան ավելի քան 50 ՀԷԿ, կրկնակի անգամ ավելի պոմպակայաններ և հիդրոտեխնիկական այլ կառույցներ (մեծ թվով հեղինակված ճարտարապետ Տ.Մարությանի կողմից), որոնց զգալի մասը (Սևան-Հրազդանի, Որոտանի կասկադի ՀԷԿ-եր և այլն) իրենց հորինվածքային, գեղարվեստական և կառուցողական հատկանիշներով ունեն որոշակի արժանիքներ: Չնայած դրան, այդ կառույցները հիմնականում չեն ուսումնասիրված և առավելապես հայ ճարտարապետության պատմությանը և տեսությանը վերաբերող աշխատություններում չեն ներկայացված, բացի Ա.Թամանյանի նախագծած ԵրՀԷԿ-ից, Այդր լճի ջրիան կայանից, 1950-ական թվականներին կառուցված գյուղական մի քանի ՀԷԿ-երից, որոնք տեղ են գտել Ստ.Մնացականյանի «Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը» գրքում (Ե., 1956):

Ոլորտի անբավարար ուսումնասիրվածության, հայ ճարտարապետության պատմության մեջ դրա չըջանառվելու հետևանքով հայ ճարտարապետության ամբողջականությունը խաթարվելու հետ միասին, հնարավոր չի դառնում այդ ուղղությամբ փորձի և ձեռքբերումների հետ հաղորդակցումը, ժառանգորդորեն չեն փոխանցվում նախագծային նվաճումները մասնավոր մեր ժամանակներում, երբ օրակարգի խնդիր են դարձել էներգետիկ նոր աղբյուրների, նոր համակարգերի ստեղծումը, նոր մոտեցումները, հնի վերաիմաստավորումները:

Ուսումնասիրել Հայաստանի հիդրոտեխնիկական կառույցների ճարտարապետությունը՝ նշանակում է ուսումնասիրել դրա վարպետների՝ առաջին հերթին ճարտարապետ Տիրան Մարությանի, Սոս Մանուկյանի, Գևորգ Մուշեղյանի, Սուրեն Պետրոսյանի, կոնստրուկտոր Հարմա Սարգսյանի և ուրիշների ստեղծագործական ժառանգությունները, որոնց ծանրակշիռ մասը կազմում են հիդրոտեխնիկական կառույցները: Գործնական և տեսական կարևոր նշանակություն ունի հատկապես Տ.Մարությանի ստեղծագործական ժառանգության ուսումնասիրությունն ընդհանրապես, որովհետև դրանում, բացի հիդրոտեխնիկական բնույթի շինություններից, շատ են ճարտարապետական բարձր արժանիքներով և որոշակի հետաքրքրություն ու արժեք ներկայացնող նաև այլ բնույթի (բնակելի, առողջապահական, ուսումնական, մշակութային և այլ) շենքերը:

Ուսումնասիրվածության վիճակը: Սկսած 1950–ական թվականներից, միջնադարյան հայ վարպետներին և նոր ժամանակների առանձին ճարտարապետների ստեղծագործական ժառանգությանը նվիրվել են մի շարք աշխատություններ: Առաջիններից են Կ.Հովհաննիսյանի «Տրդատ ճարտարապետ» (1951, ռուս.), Ստ.Մնացականյանի «Վարպետաց վարպետներ. Մանուել, Տրդատ, Սոմիկ» (1982) մենագրությունները: Խորհրդահայ ճարտարապետության ձևավորման և զարգացման խնդիրների, ինչպես նաև հայ ճարտարապետության վարպետների գործունեության լուսաբանման համար կարևոր են Յու.Յարալովի «Թամանյան» մենագրությունը (1950, ռուս.), նրա հոդվածների, փաստաթղթերի, ժամանակակիցների հուշերի (1960, կազմող Լ.Ջորյան) և «Ալեքսանդր Թամանյան» փաստաթղթերի և նյութերի (2000, կազմողներ Ա.Սարգսյան, Է.Հովսեփյան, Մ.Մարտիրոսյան) ժողովածուների հրատարակումը, Նիկողայոս Բունիաթյանին (Լ.Դոլուխանյան, 1999), Հովհաննես Քաջազնունուն (Լ.Դոլուխանյան, 2000) նվիրված մենագրությունները: Հայ ճարտարապետության գիտական ուսումնասիրության հիմնադիր Թորոս Թորամանյանի գործունեության ինքնապատմության համար կարևոր նշանակություն ունի «Թորոս

Թորամանյան, Նամակներ» ժողովածուն (1968, կազմողներ Ն. և Գ.Թորամանյաններ), նրան նվիրված գրքույկի (հեղ. Վ.Հարությունյան, 1959, 1984) և հոդվածների հրատարակումը: 1980–ական թթ. Մոսկվայում հիմնադրվեց «Народные архитекторы СССР» մատենագիտական շարքը, որի առանձին արակներում ներկայացվեցին ճարտարապետներ Ռաֆայել Իսրայելյանը (1986թ.) և Կորյուն Հակոբյանը (1991թ.) իրենց կյանքի և գիտապրակտիկ բոլոր կողմերով: Ցավոք, այդ կարևոր նախաձեռնությունը ԽՍՀՄ փլուզումից հետո դադարեց:

Հայ ճարտարապետների գիտական, ստեղծագործական գործունեության, ինչպես նաև ճարտարապետական–քաղաքաշինական շատ խնդիրների իմացության համար կարևոր նշանակություն ունեն հենց ճարտարապետների հրապարակումները, հիշողությունները, որպիսիք են Մ.Գրիգորյանի «Լենինի հրապարակ Երևանում» (1969, ռուս.), Վ.Հարությունյանի հիշողությունների շարքը (2001) և այլն: Վերջին տարիներին կապված ճարտարապետության հայ վարպետների հոբելյանների հետ, հրատարակվել են գրքույկներ, կատալոգներ, բուկլետներ՝ նվիրված Ռաֆայել Իսրայելյանին (1974թ.), Մարկ Գրիգորյանին (1976թ.), Վարազդատ Հարությունյանին (1989թ.), Միքայել Մազմանյանին (2000թ.), Ալեքսանդր Սահինյանին (2000թ.), Սոս Մանուկյանին (2001թ.), Գևորգ Մուշեղյանին (2001թ.), Տիրան Մարությանին (2002թ.): Դրանք իրենց բնույթով և ծավալի սահմանափակությամբ միայն ընդհանուր ծանոթություն են տալիս ճարտարապետության նշված վարպետների կյանքի և գործունեության վերաբերյալ և հեռու են նրանց ստեղծագործական նկարագրի, գիտական և ճարտարապետական ժառանգության ամբողջական պատկերը, դրանց քննությունն ու արժեքավորումը ներկայացնելուց:

Ճարտարապետության ականավոր վարպետների ստեղծագործական հավատամքի, մեթոդի, գեղագիտական ըմբռնումների և գեղարվեստական հայացքների դրսևորումները, որ ներկայացված են «Мастера советской архитектуры об архитектуре» երկհատոր ժողովածուներում (Մ., 1975), վերաբերում են նաև հայ վարպետներին՝ Ալեքսանդր Թամանյանին, Նիկողայոս Բունիաթյանին, Կարո Հալաբյանին, Միքայել Մազմանյանին:

Արժեքավոր է հայ ճարտարապետների գործունեության ուսումնասիրման գծով էդմոնդ Տիգրանյանի կատարած ներդրումը, մասնավորապես հայ ճարտարապետության վաստակաշատ գործիչներին Գաբրիել Տեր-Միքելյանին (Ե., 1981) և Հովհաննես Խալիփախյանին նվիրված մենագրությունները, «Հայ ճարտարապետների գործունեությունը Անդրկովկասում» (Ե., 2000) աշխատությունը:

Հայ ճարտարապետների տարբեր սերունդների կենսագրական համառոտ, բայց կարևոր նյութ է պարունակում “Архитектор” (Ե, 1998, կազմող Լիա Սաֆարյան) կենսամատենագիտական տեղեկատուն:

Վերջին տարիներին կատարվում են աշխատանքներ նաև սփյուռքահայ (իրանահայ, եգիպտահայ, ամերիկահայ և այլն) ճարտարապետների գործունեության ուսումնասիրման ուղղությամբ (Վ. Հարությունյանի, Ա.Թորամանյանի, Աշ.Գրիգորյանի, Վ.Ազեհիրյանի և ուրիշների կողմից):

Չնայած հայ ճարտարապետության գործիչներին նվիրված զգալի թվով ուսումնասիրություններին, այդ բնագավառում դեռևս անելիքները շատ են, մասնավորապես հանգամանալից ուսումնասիրության կարիք ունի հայ ճարտարապետության այնպիսի վարպետների գործունեությունը, որպիսիք են Սամվել Սաֆարյանը, Կարո Հալաբյանը, Յովհաննես Մարգարյանը, Գևորգ Քոչարը, Միքայել Մազմանյանը, Տիրան Մարությանը, Զավեն Բախշինյանը, Էդմոնդ Տիգրանյանը, Զին Թորոսյանը և ուրիշներ, նաև հայ ճարտարապետության հայրենի և Սփյուռքի հետազոտողների (Կոնստանդին Յովհաննիսյան, Ստեփան Մնացականյան, Ալեքսանդր Սահինյան, Ալպագո Նովելլո, Պաոլո Կունեո և ուրիշներ) կատարած աշխատանքը:

Հայաստանի հիդրոկայաններին են նվիրված Ա.Քարամյանի գիրքը (“Севано-Разданский каскад ГЭС” (Ե., 1966), Տ.Մարությանի մի քանի հոդվածները: Գյուղական փոքր հզորությամբ հիդրոկայաններին են նվիրված Ստ.Մնացականյանի 1956թ. լույս տեսած «Հայաստանի գյուղական բնակավայրերի ճարտարապետությունը» գրքի մի փոքր բաժինը:

Թեպետ Հայաստանը էլեկտրաֆիկացիայի երկիր է, ունի զարգացած էներգետիկ տնտեսություն և այդ ոլորտին վերաբերող մեծ թվով օբյեկտներ, որոնք հայ ճարտարապետության ընդհանուր համակարգում կարևոր դեր ունեն, սակայն դրանք դեռևս ճարտարապետական-քաղաքաշինական-կառուցվածքային արժեքավորում չեն ստացել, չի որոշարկված դրանց տեղը համընդհանուր հայ ճարտարապետության համապատկերում:

Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման և արժեքավորման գործում զգալի կարևորություն ունեն Մարությանի պատմատեսական ուսումնասիրությունները, որոնք արգասաբեր պրակտիկ նախագծման փորձ ունեցող վարպետի գիտահետազոտական ընդհանրացումների արդյունք են և վերաբերում են հատկապես Զվարթնոցին, Տայքի ճարտարապետական հուշարձաններին, ավանատիպ եկեղեցիներին, Թ.Թորամանյանի գիտական ժառանգությանը:

Չնայած Տ.Մարությանի պատկառելի գիտապրակտիկ գործունեությանը, նրա աշխատանքները խոր և հանգամանալից քննության երևե՛ չեն ենթարկվել: Գործարարական և նախագծային աշխատանքներին միայն անդրադարձել են առանձին առիթներով, հիմնականում լրագրական տեղեկատվության շրջանակներում¹:

Ֆետազոտության նպատակն է համալիր ուսումնասիրության հիման վրա ներկայացնել ճարտարապետ Տ.Մարությանի նախագծային և պատմատեսական ճարտարապետական-ստեղծագործական ժառանգությունը, արժեքավորել այն, բացահայտել այն էականը, որ ներդրել է ճարտարապետը հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրության գծով, հարստացրել է հայ պատմատեսական գիտությունը, ստեղծել է արժեքներ, որոնք էական են հայ ճարտարապետության համար ազգային մշակույթը հարստացնելու առումով:

Ֆետազոտության խնդիրներն են.

- բացահայտել և ուսումնասիրել ճարտարապետի ողջ ժառանգությունը պրակտիկ նախագծման և հայ ճարտարապետության պատմության ու տեսության բնագավառներում,

- համադրել նյութը հայ ճարտարապետության նվաճումների հետ, քննությունը տանելով հայրենական և արտասահմանյան փորձի ընձեռումների հիման վրա,

- տեքստային և գրաֆիկական միջոցներով ամրագրել նյութն իր բնութագրական և էական կողմերով,

- բացահայտել կարևորությունը և դերը սոցիալ-տնտեսական նոր պայմաններում, ուսանելի կողմերն այսօրվա նախագծային պրակտիկայում և գիտական ոլորտում,

- նշանակությունը փորձի փոխանցման, ճարտարապետական կրթության, մասնագետների որակավորման, ազգային արժեքների պահպանման և ճանաչման առումով:

Ֆետազոտության մեթոդաբանական հիմքը: Ներկա աշխատանքը կատարված է Տ.Մարությանի ճարտարապետական ժառանգության համալիր հետազոտության, քննական, համեմատական վերլուծության հիման վրա: Քննության շրջանակի մեջ են առնվել ճարտարապետի նախագծերը, դրանց հիման վրա կառուցված շենքերն ու շինությունները, որոնց զգալի մասի ուսումնասիրությունները

¹ Թորամանյան Ա., Բազմավաստակ ճարտարապետ-գիտնականը Տիրան Մարության, «Ազգ», 1996, 28 նոյեմբ., *Շախլյան Գ.*, Քարի և ջրի ներդաշնակման տիրակալը, «Հայաստանի Հանրապետություն», 2001, 23 նոյեմբ. և այլն:

կատարված են տեղում: Որպես հետազոտության սկզբնաղբյուր ծառայել են Տ.Մարությանի հայ ճարտարապետությանը նվիրված պատմատեսական աշխատությունները, համադրելով նույն թեմաներին և հուշարձաններին նվիրված այլ հեղինակների գործերի, հայրենական և արտասահմանյան նույնատիպ կառույցների փորձի, տեսական ընդհանրացումների հետ:

Դետազոտության առարկան ճարտարապետ Տ.Մարությանի նախագծային ողջ ժառանգությունն է, որն իրենում ամփոփում է շուրջ 250-ի հասնող բազմաբնույթ կառույցներ՝ մեծ և փոքր հիդրոէլեկտրակայաններ, ուսումնական, մշակութային, բնակելի, առևտրական, կենցաղային, առողջապահական, վարչական, գիտաարտադրական և այլ բնույթի շենքեր, փոքր ճարտարապետական ձևեր, քաղաքաշինական կազմավորումներ: Դիտարկումների, փաստագրման և քննության համար հիմք են հանդիսացել պատկերագրական նյութը (նախագծեր, լուսանկարներ, չափագրություններ), բուն կառույցները, Տ.Մարությանի հրատարակությունները (գրքեր, հոդվածներ) և այն հուշարձանները, որոնց վերաբերում են դրանք ժամանակագրական առումով ընդգրկելով 1937 թվականից մինչև մեր օրերն ընկած ժամանակահատվածը, այսինքն՝ ճարտարապետի ողջ ստեղծագործական գործունեության տևողությունը:

Տ.Մարությանի ժառանգությունը, որ բնութագրվում է և՛ պրակտիկ նախագծման, և՛ ճարտարապետության պատմագիտական բնագավառներում կատարած աշխատանքներով, իր երկակի բնույթով միանշանակ չէ, սակայն կա նման երկակի բնույթի գործունեությամբ զբաղված ճարտարապետների (Ն.Բունիաթյան, Ռ.Իսրայելյան) ժառանգության ուսումնասիրման ուսանելի փորձ կատարված Լ. Բաբայանի, Յու.Յարալովի, Լ.Դոլուխանյանի և ուրիշների կողմից:

Գիտական նորույթը: Տ.Մարությանի նախագծային և գիտահետազոտական գործունեությունն առաջին անգամ է դառնում առանձին ամբողջական հետազոտության առակա:

Հստակեցված, բացահայտված, արժեքավորված են.

- Տ.Մարությանի գործունեության, նախագծային և գիտահետազոտական աշխատանքների շրջանակը, ընդգրկումը, արգասիքները,

- նրա կողմից նախագծված օբյեկտների հորինվածքային արժանիքները, ստեղծագործական մոտեցումները, նոր որակները,

- նախագծված շենքերի կերպավորման գծով ձեռքբերումները, դրանց արդիական և հեռանկարային լուծումները,

- կիրառած քաղաքաշինական, գեղարվեստական, կոնստրուկտիվ լուծումների առանձնահատկությունները, դրանց ուղղվածությունը,

- ներդրումն ու բերած նորույթը Չվարթնոցի եկեղեցու և գվարթնոցատիպ կառույցների, Ավան-Հեփսիմեի տիպի եկեղեցիների, Տայքի հայկական ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրության, Թ.Թորամանյանի կարծիքների, եզրահանգումների հիմնավորման, խորացման և լրացման գծով,

- Մարությանի ստեղծագործական ժառանգության տեղն ու կարևորությունը հայ ճարտարապետության պրակտիկայում և տեսության մեջ,

- միջնադարյան ճարտարապետական կառույցների հորինվածքում համաչափական կապի բացահայտման գծով աշխատանքը և դրա կարևորությունը,

- Մարությանի ճարտարապետության ոլորտին վերաբերող հրապարակախոսության կարևորումը հիդրոտեխնիկական կառույցների, ճարտարապետական հուշարձանների և այլնի իմացության, պահպանման և պրոպագանդման ուղղությամբ:

Իր գիտապրակտիկ գործունեության ընթացքում Տ.Մարությանը կատարելապես մշակել է հիդրոկայանի շենքի հայրենական դասական կերպարը, դրանում մեծապես կարևորելով իր նախորդների ներդրումը: Որպես կանոն, նրա ճարտարապետական լուծումները սերտորեն համապատասխանում են կառույցների գործառնական, տեխնիկական և տեխնոլոգիական պահանջներին: Ավանդապաշտությունը և նորարարությունը հանդես են գալիս միահյուսված, ներդաշնակված: Ավանդական շատ հնարքներին արդիական հնչողություն հաղորդելով, ճարտարապետը արմատավորել է արդի ճարտարապետության մեջ շատ տարածում գտած գեղարվեստական և կառուցվածքային ուշագրավ ձևեր ու հնարքներ (հոծ պատի թանձրության մեջ աստիճանաբար խորացող բացվածքներ, կիսաշրջանաձև լայնացող բարավորների մոտիվը և այլն):

Մարությանի տեսական աշխատանքները հղի են սուր հարցադրումներով, նորովի, անկողմնակալ մեկնաբանություններով: Նա զգալիորեն հարստացրել է և լրացրել Չվարթնոցի իմացության թերին, նոր փաստերի հայտնաբերմամբ և վերափմաստավորմամբ արժեքավոր եզրահանգումներ է արել եկեղեցու սկզբնական տեսքի թորամանյանական տարբերակի հիմնավորման և ճշգրտման վերաբերյալ: Կարևոր ներդրում է կատարել Տայքի հայկական հուշարձանների ուսումնասիրության, դրանց ժամանակագրական ճշգրտման գործում: Լրացնելով Ավանի եկեղեցու պակասող գծագրերը, Մարությանը հիմնավորել է Թորամանյանի կարծիքը եկեղեցու

հինգգոյնի լինելու վերաբարյալ: Օգտաշատ ներդրում է կատարել Ավանի տիպի եկեղեցիների հատակագծային կառուցման համակարգի բացահայտման գծով, որը բնութագրվում է սկզբունքի և կիրառման պարզությամբ ու տրամաբանվածությամբ:

Կիրառական արժեքը: Ներկայացված նյութը, ուսումնասիրությունների արդյունքները կարող են օգտակար լինել հայ միջնադարյան ճարտարապետության տեսական և գործնական մի շարք խնդիրների ճշգրտման, խորացման, հորինվածքային ձևերի իմաստավորման, հայ ճարտարապետության ուսումնասիրման գործընթացում մեթոդական օգնության և փորձի օգտագործման, հայ ճարտարապետության վարպետների ստեղծագործական ժառանգության քննության, արժեքավորման և այլ առումներով: Մարությանի ստեղծագործական ժառանգությունը հարազատորեն է վերարտադրում 1930–80–ական թթ. խորհրդային ճարտարապետության բնորոշ և հեռանկարային հատկանիշները, բնութագրական կողմերը, որոնց ներկայացումը և իմացությունը կարևոր նշանակություն ունեն այդ ճարտարապետության անցած ուղու ըմբռնման և իմաստավորման համար:

Աշխատանքի փորձարկումը (ապրոբացիա): Ուսումնասիրության հիմնական արդյունքները հրապարակվել են գիտական հոդվածների ձևով, հաղորդվել համալսարանական գիտաժողովներում (տես հավելվածը): Աշխատանքը քննարկվել է ճարտարապետության տեսության, պատմության և հուշարձանների վերականգնման ամբիոնի ընդլայնված նիստում:

Չետազոտության կառուցվածքը պայմանավորված է առաջադրված հիմնախնդիրների լուծման առանձնահատկություններով և նպատակահարմարությամբ: Այն բովանդակում է աշխատանքի ընդհանուր բնութագիրը, «Ստեղծագործական աշխատանքը նախագծման բնագավառում» և «Գիտահետազոտական ներդրումը հայ ճարտարապետության ուսումնասիրության գծով» գլուխները, դրանց եզրակացությունները, մատենագիտությունը, թեմայի գծով հրապարակումների ցանկը, պատկերագրական–գրաֆիկական նյութերի աղյուսակները (29 հատ):

ՉԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԴԱՎՈՒԹՅՈՒՆԸ

«Աշխատանքի ընդհանուր բնութագիրը» ներածական մասում հիմնավորվում է թեմայի արդիականությունը, ուսումնասիրվածության վիճակը, հետազոտության նպատակը, խնդիրները, մեթոդաբանական հիմքը, ուսումնասիրության առարկան, գիտական նորույթը, կիրառական արժեքը, աշխատանքի փորձարկումը, կառուցվածքը:

ԳԼՈՒԽ 1. ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ՆԱԽԱԳԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ

1. Չիդրոտեխնիկական կառուցվածքներ

Չայաստանում հիդրոտեխնիկական շինարարության զարգացման գործում իր որոշակի ներդրումն ունի ճարտարապետ Տիրան Մարությանը, որը Չայաստանի ՉԷԿ–երի մոտ 80%–ի ճարտարապետական մասի հեղինակն է (նաև մի քանիսի համահեղինակը): Չիդրոտեխնիկական կառույցները, որոնց ճարտարապետական մասի հեղինակը Տ.Մարությանն է, հետևյալներն են.

– Սևանի ստորերկրյա ՉԷԿ (1949թ.) գլխավոր վահանի վերերկրյա շենքը (1946/47թթ.), տրանսֆորմատորային աշտարակը և մեխանիկական արհեստանոցները (1947թ.), բաց ենթակայանի հյուսիսային և հարավային մուտքերը (1948թ.), ջրընդունիչի 2–րդ հերթը (լճափին, 1959թ.), ՍևանՉԷԿ–ի ջրահեռացման թունելի ձևավոր ելքը (1947/48թթ.),

– Աթարբեկյան (այժմ Չրազդան) ՉԷԿ (1959թ.) կայանի գլխավոր շենքը և գլխավոր վահանի շենքը (1959թ.),

– Գյումուշ (այժմ Արգել) ՉԷԿ (1953թ.) կայանի գլխավոր գեներատորների շենքը և գլխավոր վահանի շենքը (1941/53թթ.), թունելների ելքը և մուտքը (1946թ.), 4–րդ թունելի ձևավոր ելքը (1951/52թթ.), բաց ենթակայանի երկու մուտքերը (1952թ.), հետիոտնի կամրջակը (1953թ.), 4–րդ ջրանցույցը (1951թ.), ջրատար խողովակաշարի գլխամասի մեխանիզմների շենքը (1951թ.), ուժային հանգույցի ընդհանուր հատակագիծը (1952թ.),

– ԱրգնիՉԷԿ (1956թ.) գլխավոր հանգույցի ձևավորումը (1954/55թթ.), ստորերկրյա ՉԷԿ–ի գեներատորների սրահի շքամուտքը (1955թ.), կիսաժայռափոր ենթակայանի ձևավոր խորշերը (1955թ.), բազմաթռիչք ջրանցույցը և ջրաշտարակը (1955թ.), փոքր ջրապատվարներ Չրազդան գետի հունում (1955թ.),

– ԵրևանՉԷԿ (1962թ.) գլխավոր շենքը (1956/60թթ.), յուղային տնտեսության փակ և բաց շենքերը (1960թ.),

– ՏաթևՉԷԿ գլխավոր շենքի ճարտարապետական–տեխնիկական նախագիծը, գլխավոր շենքի իրականացված նախագիծը (հեղինակային խմբի կազմում՝ Տ.Մարության, Ռ.Յաղուբով, Ս.Պետրոսյան, Ռ.Չոփաննիսյան),

– Շամբի ՉԷԿ գլխավոր շենքը (1973թ.), ջրհան կայանի շենքը (1975թ.),

- Սպանդարյանի ՅԷԿ՝ գլխավոր շենք (1970թ.), պատվարներ Որոտանի հունում (լճակ Սիսիանի սահմաններում), (հեղինակակից՝ Բ.Չոլոյան, Վ.Մատինյան և ուրիշներ),

- Բուհի ՅԷԿ (Գանա)՝ գլխավոր շենք (հեղինակային խմբի կազմում),

- Կաբարդինա-Բալկարիայի (Յյուսիսային Կովկաս) ՅԷԿ-եր՝ Սովետական ՅԷԿ (1980թ.), Աուշիգերսկայա ՅԷԿ (1980թ.):

Մարությանի նախագծած հիդրոտեխնիկական կառույցները ներկայացնում են որոշակի հետաքրքրություն և արժեք ճարտարապետական, քաղաքաշինական, տեխնոլոգիական և այլ առումներով, դրանցից շատերը ճանաչվել են, գնահատվել խորհրդահայ արտադրական ճարտարապետության բնագավառում:

1.1. Հայաստանում հիդրոտեխնիկական շինարարության զարգացման համառոտ ակնարկ:

1.2. Սևան-Հրազդան կասկադի հիդրոէլեկտրակայաններ: Սևան-Հրազդան կասկադը Հրազդան գետի վերին և միջին հոսանքներում ՅԷԿ-երի համալիր է, որոնք էներգետիկ և ջրատնտեսական նպատակներով օգտագործում են Սևանա լճի ջրի արհեստական թողքերը և Հրազդան գետի բնական հոսքը: ՅԷԿ-երի շինարարությունն սկսվել է 1930 թվականին և ավարտվել 1962-ին: Կասկադը բաղկացած է 6 ՅԷԿ-ից (Սևանի, Աթարբեկյանի, Գյումուշի, Արզնու, Քանաքեռի և Երևանի):

Սևանի ՅԷԿ-ը առաջին ստորերկրյա հիդրոէլեկտրակայանն է նախկին ԽՍՀՄ տարածքում, որն իր յուրօրինակությամբ, ճարտարապետական-կառուցվածքային հատկանիշներով արժանացել է հայրենի և օտար տեխնիկական-մասնագիտական շրջանակների գնահատանքին: Կայանի համալիրի բաղկացուցիչ մասերն են ջրընդունիչ կառուցվածքը (ճարտարապետ՝ Ռ.Իսրայելյան), ուժային հանգույցի գլխավոր ժայռափոր շենքը, բաց ենթակայանը իր մի շարք կառուցվածքներով, և ջրի արտահոսման թունելը:

Բուն կայանը գտնվում է լճի մակերևույթից 50 մ, գետնի մակերևույթից՝ 110 մ ցածր: Ժայռափոր շենք է, որի պատերի հեռավորությունը ժայռից հնարավորություն է տալիս անհրաժեշտ քանակությամբ ստորերկրյա ջրերը հավաքելու և հեռացնելու: Շենքը երկտակ թաղակապ է, ինչը նույնպես արվել է ստորերկրյա ջրերի գոյության պատճառով:

Հիդրոէլեկտրակայանի գլխավոր մուտքը բացվում է դեպի հորիզոնական թունելը, որի սկզբնամասում գտնվում է նախասրահը, իսկ վերջնամասում երկրորդ մուտքն է, որին միանում է վերելակի ուղղաձիգ հորանը:

Շենքի թաղակապ առաստաղը և պատերը հարդարված են զուսպ ձևերով: Դահլիճում լուսավորության աղբյուրները տեղադրված են ամբարձիչի կրող հեծանի հետնամասում և ինտերիերում գտնվողներին տեսանելի չեն: Կայանի հորիզոնական թունելի մուտքը (ճարտարապետներ՝ Ս.Սաֆարյան, Մ.Հայրապետյան) կամարակապ է՝ բաց նախասրահով:

Հիդրոէլեկտրակայանի վերգետնյա մասի բոլոր կառույցները ընկալվում են որպես միասնական համալիր ճարտարապետական ընդհանուր ձևերի, շինանյութի տեղին ընտրման, բնական լանդշաֆտի հետ ներդաշնակման և այլ հատկանիշների շնորհիվ:

Աթարբեկյան ՅԷԿ-ը գտնվում է Հրազդան քաղաքի հյուսիսային մասում, Գյումուշ-ՅԷԿ-ի գլխամասային հանգույցի մեծ ջրամբարի մոտ: Հանգույցի հիմնական կառույցներն են գլխավոր շենքը, բաց ենթակայանը, օժանդակ և յուղային տնտեսություններն ու պահեստը:

ՅԷԿ-ի շենքը տեղադրված է լանջի փորվածքի մեջ և կողքերից ընկալվում է մասնակիորեն, իսկ գլխավոր ճակատի կողմից՝ չնայած ռելիեֆով ստեղծված լրիվ ընկալման հնարավորությանը, փակված է բաց ենթակայանի սարքավորումներով և մետաղական կոնստրուկցիաներով:

Աթարբեկյանի ՅԷԿ-ի ուժային հանգույցի գլխավոր շենքի ճարտարապետական լուծումը սերտորեն համապատասխանում է տեխնոլոգիական գործընթացին:

Գյումուշի (Արզելի) ՅԷԿ-ը Սևան-Հրազդան կասկադի 3-րդ և ամենահզոր հիդրոէլեկտրակայանն է: Բաղկացած է մեծաթիվ հիդրոտեխնիկական կառույցներից: Գլխամասային հանգույցից ջուրը հասցված է ուժային հանգույց 4 բաց ջրատարներով (ջրանցքներ), 4 թունելների և 4 ջրանցույցների միջոցով: Ողջ համալիրը օրգանապես կապված է շրջակա միջավայրին: Այս կառույցում առավել ակնհայտ ձևով է դրսևորվում ճարտարապետի ձեռագիրը և համալիր ստեղծելու նրա վարպետությունը:

ՅԷԿ-ի շենքը հատակագծում ուղղանկյուն է՝ 18 x 84մ չափերով, տեղադրված է ձորի երկարությամբ զուգահեռ գետի հունին, և բաժանված է երեք ոչ հավասար մասերի: Ինչը պայմանավորված է ռելիեֆով և ՅԷԿ-ի աշխատանքի տեխնոլոգիական գործընթացներին համապատասխանելու պահանջով: Շենքի երկայնական առանցքի ուղղությամբ՝ 48մ ճակատով և ողջ լայնքով գտնվում է տուրբոգեներատորների դահլիճը, հարավում մոնտաժային հրապարակն է՝ իր օժանդակ սենյակներով: Յյուսիսային կողմում գտնվում է 5 հարկանի ծառայողական մասը, որի 1-ին հարկում արհեստանոցներն են, 2-րդ և 3-րդ հարկերում ծառայողական

սենյակները, 4-րդ հարկում կենտրոնական ղեկավարման վահանը, նկուղային հարկում անձնակազմի սանիտարահիգիենիկ բաժինն է:

Հիդրոէլեկտրակայանի շենքը լուծված է ծավալատարածական հստակ և մոնումենտալ ձևերով: Ճարտարապետական արտահայտչամիջոցները, ռիթմական և մետրական նուրբ զգացողությունը, պատուհանների նեղ և երկար համաչափությունը, շրջանակների աստիճանածությունը, լույս ու ստվերի խաղը շենքին տալիս են տպավորիչ տեսք:

Մասշտաբի թելադրողը հանդիսացել են տեխնոլոգիական սարքավորումները (գործընթացը), բնական միջավայրը, բայց ոչ մարդը, ինչը պայմանավորված է շենքի բնույթով: Քաղաքաշինական և հորինվածքային բարձր արժանիքներով հանդերձ, հարազատ մնալով ժամանակի ոգուն, երբ առավել կարևորվում էին գեղարվեստական չափանիշները, ինտերիերում օգտագործված են կառույցի տեխնիկատեխնոլոգիական պահանջներով չթելադրված և շենքի էությունից չբխող անհարկի ձևեր և հարդարանքի միջոցներ:

Արզնիի ՅԷԿ-ը Սևան-Յրազղան կասկադի 4-րդ հիդրոէլեկտրակայանն է: Այն գտնվում է Յրազղան գետի ծորում, Արզնի առողջարանից 0.5 կմ ներքև:

Հիդրոկայանները կատարելով միևնույն դերը, իրենց հորինվածքով, թվում է, թե պետք է եականորեն իրարից չտարբերվեն, սակայն իրականում այդպես չէ: Արզնիի հիդրոէլեկտրակայանը, որ դարձյալ ժայռափոր է, ոչնչով չի նմանվում Սևանի հիդրոէլեկտրակայանին. լոկ մի բան է ընդհանուր այն, որ երկուսն էլ ստորերկրյա են:

Ինչպես հատուկ է Մարությանի նախագծման մեթոդին, կայանի մեքենայական դահլիճն ունեցել է ճարտարապետական մշակման տարբերակներ: Մի դեպքում այն պատկերվում էր եզերված պատերով, որտեղ սյուները և ենթակրանային հեծանը դուրս չէին գալիս պատի հարթությունից՝ մակերես չկորցնելու նպատակով: Յատակից 4-5մ բարձրությամբ միջսյունային տարածությունները կամարակապ ներս են ընկած կազմելով խորշեր: Մյուս տարբերակով նախատեսվում է սյուների համաչափությունների փոփոխություն, այնպես, որ նրանց լայնությունը գերազանցեր դուրս ցցվածությանը, ստեղծելով պատի հետ ավելի միաձույլ և սրահից մակերես չխլող կոնստրուկցիա:

Յեղինակը շատ է կարևորել Յրազղանի ծորը անաղարտ պահելու և Արզնի առողջարանը չխաթարելու խնդիրը: Նա նախագծային այս կամ այն լուծմանը հանգել է բազմաթիվ տարբերակների մշակման և համակողմանի վերլուծությունից հետո միայն: Դրանում կառույցի տեխնիկական-տեխնոլոգիական խնդիրների ռացիոնալ լուծման հետ միասին շատ ավելի կարևորվել են բնապահպանական խնդիրները:

ԵրևանՅԷԿ-2-ը Սևան-Յրազղան կասկադի վերջին աստիճանն է: Նրա ուժային հանգույցը կառուցված է 1925 թվականին շահագործման հանձնված ԵրՅԷԿ-1-ի ուժային հանգույցի մոտ, իսկ գլխամասայինը՝ ՔանաքեռՅԷԿ-ից մոտ 1 կիլոմետր դեպի ներքև:

ՅԷԿ-ի շենքը տեղադրված է Յրազղան գետի աջ ափին, ԵրևանՅԷԿ-1-ի շենքից դեպի հարավ, մոտ 40 մ հեռավորությամբ: Իրականացված տարբերակը հին ու նոր կառույցների ներդաշնակման առումով առավել օպտիմալն է, քանի որ ՅԷԿ-երի շենքերն իրենց կից կառույցներով, ընդհանուր ձևով և հորինվածքով ստեղծել են ամբողջական մի համալիր, որը նաև ներդաշնակ է շրջապատին ու լանդշաֆտին՝ և՛ ծավալատարածական, և՛ հատակագծային առումներով:

ԵրևանՅԷԿ-2-ի շենքը ուղղանկյուն կառույց է, տեղադրված բարձր պատվանդանի վրա: Գլխավոր ճակատին հակառակ, լանջի կողմից շենքին կից է ողջ երկարությամբ ձգվող, բարձրության մոտ կեսին հասնող մաս, որտեղ գտնվում են ծառայողական սենյակները: Գլխավոր ճակատի կողմից այն դիտողին տեսանելի չէ. երևում է միայն հարավային մասը, որի գլխավոր ճակատին զուգահեռ հարթության վրա տեղադրված է աղբյուր-հուշարձանը:

Ճարտարապետ Տ.Մարությանն իր գործընկերների (ճարտարապետներ Սոս Մանուկյան, Գևորգ Մուշեղյան և ուրիշներ) հետ 1940-50-ական թվականներին ստեղծեց հայկական հիդրոէլեկտրակայանի հորինվածքային կերպարը, որը բնութագրվում է տեխնոլոգիական և ֆունկցիոնալ գործընթացներին համապատասխանությամբ, հատակագծային և ծավալային լուծումների պատճառաբանվածությամբ, հայ դասական ճարտարապետության հորինվածքային ձևերի և հարդարանքի միջոցների (կամարներ, որմնասյուներ, ճակտոններ, խոյակներ և այլն) կիրառմամբ, տեղանքի հետ օրգանական կապվածությամբ, միջավայրի անխաթար պահպանման, հիդրոտեխնիկական կառույցների դերի ընդլայնման (հանգստի, դիտողական, տրանսպորտային և այլ նպատակներով) ուղղվածությամբ: Դրանով է պայմանավորված, որ հիդրոտեխնիկական կառույցների մեծ մասը հարստացնում է միջավայրը, դառնում դրա օրգանական բաղադրիչը: Մեծ վարպետություն, փորձառություն, նաև ռիսկ էր պետք գնալու Սևանի, Արզնիի ՅԷԿ-երի ստորերկրյա լուծումներին, Երևանի ՅԷԿ-ը տեղադրելու թմամնյանի նախագծած ՅԷԿ-ի հարևանությանը առանց խաթարելու միջավայրը, չնսեմացնելով գոյություն ունեցողը, ընդհակառակը՝ հարստացնելով այն, ստեղծելով համակառուցային արժեք:

1.3. Որոտանի կասկադի հիդրոէլեկտրակայաններ:

Սպանդարյան ՅԷԿ-ը Որոտանի կասկադի գլխային հիդրոհանգույցն է: Ծավալատարածական առումով ուշագրավ լուծում ունի ՅԷԿ-ի համալիրը (1970թ.), որտեղ տեխնոլոգիայով թելադրված միմյանց շաղկապված են մեքենայական սրահի, ղեկավարման հանգույցի, վարչական մասնաշենքերը և էլեկտրաենթակայանը: Այդտեղ գեղարվեստական արտահայտչականության խնդիրը մեծ չափով կատարում է բաղկացուցիչ ծավալների ներդաշնակ և համամասն կապն ու միմյանց նկատմամբ շահեկան դասավորությունը:

Շամբի ՅԷԿ-ը Որոտանի կասկադի 2-րդ, ամենահզոր կայանն է (1973-76թթ.): Համալիրում աչքի ընկնողը հիդրոագրեգատների սրահի շենքն է, որ գլխավոր ճակատի և լայնական արևմտյան ճակատի կողմից գոտևորված է ղեկավարման վահանի և վարչական շենքի ծավալներով: Ետևի ճակատին կից է էլեկտրաենթակայանը: Ուշագրավ հնարք է ուժային մասնաշենքի գլխավոր ճակատի կողմից ողջ բարձրությամբ ուղղաձիգ նեղ պատուհանների մոտիվը, որը նույնաման 3 պատուհանի ձևով կրկնվում է լայնական արևմտյան ճակատում: Այդտեղ շեշտվածը մասնաշենքերի ներդաշնակ ծավալներն են, դրանց կապը միջավայրի հետ:

Տաթևի ՅԷԿ-ը Որոտանի կասկադի առաջին հերթին գործարկված (1970թ.) 3-րդ հիդրոհանգույցն է (ճարտարապետներ Ռ.Յաղուբովի, Ս.Պետրոսյանի և Ռ.Հովհաննիսյանի հետ): Արտաքին տեսքում աչքի ընկնողը մեքենայական սրահի շենքն է՝ իր չափերով ամենամեծը, պայմանավորված 3 շերտավոր հիդրոտուրբինների գոյությամբ: Գլխավոր ճակատի կողմից նրան կից է ղեկավարման վահանի մասնաշենքը, որին էլ կից է էլեկտրաենթակայանը: Մեքենայական սրահի ճակատը ողջ երկարությամբ ապակեպատ է՝ ձևավորված շախմատաձև դասավորված երկաթբետոնե բջջային տարրերով, որոնք գոտիների ձևով բռնում են նաև լայնական ճակատների մի մասը:

1970-ական թվականներին կառուցված Որոտանի ՅԷԿ-երն իրենց ճարտարապետական կերպարով եականորեն տարբերվում են 1940-50-ական թվականներին կառուցված Սևան-Հրազդան կասկադի ՅԷԿ-երից: Դրանցում բացակայում են անցյալի ճարտարապետական ձևերի ու հարդարանքի տարրերը: Գեղարվեստական արժեքի կրողը ոչ թե միջնադարյան հայ ճարտարապետության ավանդված կամարները, որմնասյուները, ատամնաշարով քիվերը, բացվածքների եզրակալները, շքանուտքերը և այլն են, այլև՝ մասշտաբային, ներդաշնակ փոխկապակցված ծավալները, ճակատների ռիթմիկ, համաչափ լուծումները, տարբեր շինանյութերի և շինարարական տարրերի համադրումը:

Որոտանի ՅԷԿ-երում ճակատային հարթությունները հարթային են, ծայրահեղորեն պարզեցված՝ ածանցյալ կոնստրուկտիվ և տեխնոլոգիական պահանջներին: Կարծում ենք, ճարտարապետը դրանով ոչ թե հրաժարվել է նախկինում իր դավանած ոճական և գեղարվեստական սկզբունքներից, այլ գնացել է ժամանակի ոգուն, գեղարվեստական արտահայտչականության ըմբռնումներին հարազատ մնալու ճանապարհով, ինչն այսօր առավել օրինաչափ է, զարգացման միտումներ ու հեռանկար ունի:

1.4. Գյուղական (փոքր) հիդրոէլեկտրակայաններ: Տ.Մարությանը նախագծել է 15-ից ավելի գյուղական (փոքր) հիդրոէլեկտրակայաններ Մարտունիում (1936թ.), Մարտունիկում (այժմ Մարտունի, ճամբարակի տարածաշրջան, 1936թ.), Այգեծորում (1936թ.), Վարդենիսում (1936թ.), Ազատեկում (1937թ.), Կրասնոսելսկում (այժմ՝ ճամբարակ, 1937թ.), Կարճաղբյուրում (1937թ.), Ագարակում (Ստեփանավանի տարածաշրջան, 1938թ.), Արտաշատում (1938թ.), Ծաղկավանում (1938թ.), Կույբիշևում (այժմ՝ Հաղարծին, 1938թ.), Նոր Բայազետում (այժմ՝ Գավառ, 1940թ.), Ողջիում (1948թ.), Կապսի ՅԷԿ (1984թ.), Յերիերի ջրամբարին առընթեր (1986թ.), ԱյրումՅԷԿ (վերակառուցման նախագիծ, 1987թ.), ջրիան կայանի շենք Վանաձորում (1989թ.): Գյուղական հիդրոէլեկտրակայաններից շատերը ճարտարապետական առումով ինքնատիպ և հետաքրքիր շինություններ են: Այդ ոլորտում ևս նշանակալից է ճարտարապետի վաստակը:

2. Քաղաքաշինական աշխատանքներ

2.1. Գյուղական բնակավայրերի հատակագծում: Տ.Մարությանը նախագծել է զգալի թվով գյուղական բնակավայրերի գլխավոր հատակագծեր. Գյողաքլու (Մրգավան), Գ.Զոչարի հետ, 1935թ., Վերին Արտաշատ, Գ.Զոչարի հետ, 1935թ., Ֆրանգանոց (Ամբերդ), 1935թ., Խզնաուզ (Արագած), 1935թ., Սամաղար (Գեղակերտ), 1936 թ., Հայթաղ, 1936թ., Ղարաղշլաղ (Բարեկամավան), 1936թ., Ներքին հաթունարխ (Գայ), 1936թ., Այասլու (Այգեստան), Գ.Ալոյանի հետ, 1936թ., Սարդարապատ (Հոկտեմբեր), 1937թ., Զյարիմարխ (Սովետական), 1937 թ., Էլար (Աբովյան), 1937թ., Բաշգյուղ (Ակունք, Աբովյան), 1937թ., Նոր Զրաշեն (Զրաշեն), Մ.Հովհաննիսյանի հետ, 1937թ., Կրխբուլախ (Ակունք, Վարդենիս), 1938թ., Ձառ, 1938թ., Գառնի, 1954/55թթ.:

Կազմած նախագծերը վերաբերում են ինչպես նոր հատակագծմանը, այնպես էլ գոյություն ունեցող գյուղերի վերահատակագծմանը: Հատակագծերի մեջ նկատի են առնված բնական պայմանները (ռելիեֆ, իշխող քամիների ուղղություն և այլն), նպատակահարմար կապը արտադրական և բնակելի հատվածների միջև, հարաբերակցությունը տարանցիկ և տեղական ճանապարհների հետ, բնակչությանը խմելու ջրով ապահովելու և շատ այլ խնդիրներ:

Հատակագծման, ինչպես նաև բնակելի տների ձևերի նախագծման ժամանակ Մարությանը կարևորություն է տվել հայկական ժողովրդական ճարտարապետության փորձին և կենցաղային ավանդական սովորույթներին: Հորինվածքային բազմազանությունը, առանձին բնակավայրերի գեղարվեստականությունը և միջավայրի հետ ունեցած ներդաշնակ կապը վկայում են հեղինակի առաջարկած լուծումների պատճառաբանվածությունը և գործնական կարևորությունը:

Հատակագծերը արտացոլում են ժամանակի գյուղը բնութագրող սոցիալ-տնտեսական գործոնները, աչքի են ընկնում հիմնականում հորինվածքի հստակությամբ, կառուցապատման գոտևորմամբ բնակելի, հասարակական և արտադրական մասերի, տարանցիկ ճանապարհների հետ նպատակահարմար կապով, սանիտարահիգիենիկ նպաստավոր պայմանների առաջադրմամբ, գեղարվեստական արտահայտչականությամբ և այլն: Գյուղերի ճարտարապետական կերպարի որոշիչները ոչ միայն կառույցներն են, այլև բարեկարգման և քաղաքաշինական միջոցառումները:

2.2. Ավանների հատակագծում: ճարտարապետ Ս.Մարությանի քաղաքաշինական կարևոր աշխատանքների թվին են պատկանում հիդրոէլեկտրակայաններին կից մշտական կամ ժամանակավոր ավանների գլխավոր հատակագծերը: Նկատի ունենք ՍևանՅԷԿ-ի ավան (1940թ.), ԳյումուշՅԷԿ-ի ավաններ Լուսակերտ (Արգել, 1947թ.), Լուսավան (Չարենցավան, 1947թ.), Սոլակ Ներքին (Սոլակ, 1948թ.), Սոլակ Վերին (Սոլակ, 1948թ.), ժամանակավոր ևս 4 ավաններ (1948թ.), ԱրզնիՅԷԿ-ի ավաններ՝ գլխամասային հանգույցի ավան (Զինվորական կայազորի ավան, 1952թ.), Նոր Գեղի (1952/54թթ.), Նոր Հաճըն (1953թ.), Բանավան (Արզնի թիվ 1 առողջարան, 1954/55թթ.), Աթարբեկյան (Հրազդան) ՅԷԿ-ի ավաններ՝ Գեղամավան (1952թ.), Գագարին (1952թ.), Ծաղկունք (1952թ.), Լուսաշեն (Հրազդան, 1953թ.), Որոտանի կասկադի ՅԷԿ-երի ավաններ Դավիթ Բեկ (1953թ.), Գեղարոտ (1964թ.), Շինուհայր (1964թ.), Որոտան (1964թ.), Կաքավարտ (1964թ.), Սիսիան քաղաքի Աջափնյակ (1964թ.), Շամբ (1964թ.), Գորայք (1965թ.), Բուրաստան (1965թ.), Արփա-Սևան թունելի ավան Կեչուտ (այժմ Կեչուտ պանսիոնատի համալիր), Ջարամագ ՅԷԿ-երի ավան Ալագիր (այժմ Ալագիր քաղաքի թաղամաս, 1976/77թթ.), ՀՀ ԳԱԱ երկրաբանական դիտարանի համալիրի և ավանի գլխավոր հատակագիծ (1974թ.):

Ս.Մարությանը հիդրոէլեկտրակայանների ավանների նախագծերում ևս դրսևորվում է որպես վարպետ քաղաքաշինարար: Դրա արտահայտություններից է այն, որ այդ ավանները, հիմնականում նախատեսված լինելով ժամանակավոր օգտագործման նպատակով որպես բնակավայր հիդրոկայանների շինարարությունն իրականացնող

բանվորների համար, հետագայում էլ շինարարության ավարտից հետո, շարունակեցին իրենց դերը, շատերն իրենց հորինվածքով նոր քաղաքների առաջացման հիմք դարձան, հանդիսանալով նրանց հորինվածքի կարևոր բաղադրարար: Նույն կերպ, դրանցում նախատեսված բնակելի, ուսումնական, նախադպրոցական, սոցիալական ծառայության օբյեկտները, որոնցից շատերի գործառնությունը ևս պետք է տևեր մինչև ՅԷԿ-երի շինարարության ավարտը, գործում են առ այսօր, հանդիսանալով բնակավայրերի բարետես և ներկայանալի շինություններից:

3. Բնակելի և քաղաքացիական շենքեր

3.1. Բնակելի շենքերի ճարտարապետություն: Բնակարանային ճարտարապետության գծով ճարտարապետ Ս.Մարությանը կատարել է հետևյալ ներդրումը. Ազատության պողոտայի կառուցապատում Երևանում (1955-65թթ.), բնակելի տուն մեկ և երկու ընտանիքի համար (Ռ.Իսրայելյանի և Գ.Վարդևանյանի հետ, 1947թ.), բնակելի տուն չորս և վեց ընտանիքի համար (երկհարկանի) Արզնիի թիվ 1 առողջարանում և Լուսաշեն ավանում (այժմ Հրազդան քաղաքի կազմում, 1952թ., յուրաքանչյուրից կառուցվել է 6-8 հատ), բնակելի շենք Երևանում (Նալբանդյան փողոց, թիվ 55, 1950թ.), բնակելի շենք Երևանում (Մոսկովյան փողոց, թիվ 8, 1950-57թթ.), բնակելի շենքեր (3 հատ) Երևանում (Դեմիրճյան փողոց, թիվ 40, 1958-60թթ.), բնակելի շենք Երևանում (Ազատության պողոտա, թիվ 1-12, 1955-65թթ.), բնակելի շենք Երևանում (13 հարկանի, միաձույլ երկաթբետոնե հիմնակմախքով, Ազատության պողոտա, թիվ 6, 1963-1965թթ.), բնակելի մենատուն Երևանում (Կորյունի փողոց, թիվ 23, 1947թ.), բնակելի մենատուն Լուսակերտում (այժմ Արգել, գրող Հրաչյա Քոչարի համար, 1960-63թթ.), հանրակացարաններ ՅԷԿ-երի ավաններում (նաև բլոկներով, 1950թ.), բնակելի շենք Սևանում ՅԷԿ-ի աշխատողների համար (1950թ.), բնակելի 3-4 հարկանի շենքեր Կեչուտի պանսիոնատում (6 հատ, 1967թ.):

3.2. Ուսումնական շենքեր: Ս.Մարությանի նախագծած ուսումնակրթական օբյեկտներն են Երևանի կոոպերատիվ տեխնիկումը (այժմ Հայաստանի ճարտարագիտական պետական համալսարանի մասնաշենք, 1938-43թթ.), անասնաբուժական տեխնիկումը Ստեփանավանում (1937-38 թթ.), մանկամսուրի և մանկապարտեզի շենքեր ՅԷԿ-երի ավաններում (1950-60-ական թթ.), դպրոցներ ՅԷԿ-երի (Արզնիի, Աթարբեկյանի) ավաններում (1953-60-ական թթ.), միջնակարգ դպրոց Երևանի Ազատության պողոտայում (Լ.Տոլստոյի անվան, 1955-65թթ.), երաժշտական ուսումնարան Կապանում (1967-73թթ.): ճարտարապետը ուսումնական շենքերի ճարտարապետության գծով զգալի ներդրում է կատարել նաև իր նախագծած գյուղերի և

ավանների հատակագծերում դպրոցական շենքերի ներառմամբ, դրանց քաղաքաշինական, ճարտարապետական խնդիրների լուծումներում:

3.3. Մշակութային շենքեր: ճարտարապետի նախագծած այդ բնույթի շենքերն են. ակումբ 200 տեղանոց դահլիճով Լուսակերտում (Արգել, Գ.Քոչարի անվան մշակույթի տուն), 1947թ., ակումբ 150 տեղանոց դահլիճով Շիրակի տարածաշրջանի գյուղերում, 1948թ., ակումբ 200 տեղանոց դահլիճով Աղբուլաղում (Լուսաղբյուր, Անիի տարածաշրջան), 1948թ., ակումբ 300 տեղանոց դահլիճով Գյումրիում, 1948թ., ակումբ 300 տեղանոց դահլիճով Լուսավանում (Չարենցավան), 1949թ., ակումբ 100 տեղանոց դահլիճով ԱրզնիՅԷԿ-ի բանավաններում, 1950թ., ակումբ – մշակույթի տուն – թատրոն 450 տեղանոց դահլիճով Զրազդան քաղաքում, 1953թ., ակումբ 250 տեղանոց դահլիճով Արզնիի թիվ 1 առողջարանում, 1955թ., ակումբ 200 տեղանոց դահլիճով Գագարին ավանում, 1956թ., ակումբ-մշակույթի տուն-թատրոն 450 տեղանոց դահլիճով Սիսիանի Աջափնյակում, 1965–67թթ. (համահեղինակներ՝ Լ.Բաբայան և ուրիշներ), «Չվարթնոց» կինոսրահ (ստորգետնյա) 450 տեղանոց դահլիճով Երևանի Ազատության պողոտայի թիվ 6, 1965թ., համերգասրահ (երաժշտական ուսումնարանին առընթեր) 700 տեղով Կապանում, 1967–73թթ., ակումբ 300 տեղանոց դահլիճով Դվինում:

Բնակավայրերի հասարակական կենտրոնների առավել նշանակալից կառույցները հանդիսանում են ակումբները, և նրանց ճարտարապետական լուծումն է, որ հիմնականում տոն է տալիս կենտրոնի ճարտարապետությանը: Այդ առումով Մարությանի կողմից կարևորված են ակումբների տեղի և դասավորության հարցերը: Առավել նպատակահարմար լուծումն այն է, երբ ակումբը կից է բնակավայրի մշակույթի և հանգստի գոտուն, ինչը մեծացնում է ակումբային աշխատանքների նպատակահարմարությունը: Ակումբների ճարտարապետական հորինվածքը բխում է նրանց էությունից, բովանդակությունից: Դրանք ունեն պարզ լուծումներ, հիմնականում առանց ավելորդությունների, սերտորեն կապված են միջավայրի հետ: Կարևորված են ինտերիերի մշակման խնդիրները:

3.4. Այլ բնույթի շենքեր: Տ.Մարությանի բազմաբնույթ նախագծային գործունեությունը, բացի քաղաքաշինական-հատակագծման աշխատանքներից, հիդրոտեխնիկական, ուսումնական, մշակութային, բնակելի շենքերից, փոքր ճարտարապետական ձևերից, ընդգրկում է նաև այլ բնույթի շենքեր և շինություններ: Դրանց թվին են պատկանում Երևան-Սևան երկաթուղու կայարանների շենքերը Էլառում (այժմ ք.Արուլյան, 1948թ.), Քանաքեռում (1948թ.), Արզնիում (1949թ.), Տաթևի օթևանը («Սատանի

կամրջի» մոտ, 1947թ.), հիվանդանոց 30 մահճակալով (1947թ.), հիվանդանոց 25 մահճակալով (1948թ.), բուժարաններ, վարչական, օժանդակ շենքեր (Լուսակերտում, Արզնիի թիվ 1 առողջարանում), Լուսաշենում, 1948–55թթ.), վարչական շենք Երևանում (Վաղարշյան փ. թիվ 20, 1970թ.), վարչական շենք Գորիսում (1970թ.), Զրեջ կայանի շենք Լուսակերտում (1947թ.), Լուսավանում (Ռ.Իսրայելյանի հետ, 1947թ.), ԶԶ ԳԱԱ երկրաբանական դիտարանի լաբորատորիայի շենքը Գառնիում (1974թ.), առևտրական և կենցաղային սպասարկման շենքեր Լուսավանում, Լուսակերտում, Արզնիում և այլն:

3.5. Փոքր ճարտարապետական ձևեր: Բնական է, որ այնպիսի բազմաժանր և գեղարվեստական նախասիրությամբ ճարտարապետ, ինչպիսին Տիրան Մարությանն է, չէր կարող շրջանցել փոքր ճարտարապետական ձևերը: Նրա նախագծած այդ կառույցները հիմնականում աղբյուր-հուշարձաններ են առանձին կամ հիդրոէլեկտրակայանների համալիրում ընդգրկված կառույցների ձևով. Դշլաղ գյուղում (այժմ Վանաձոր քաղաքի Տավրոս թաղամաս, 1944–45թթ.), ՍևանՅԷԿ-ի բաց ենթակայանում (1948թ.), Լուսակերտում (Արգել, 1950թ.), Բերսաբե ավանում (Արգել գյուղի և ԱրգելՅԷԿ-ի միջև, ճանապարհին, 1953թ.), ԱրգելՅԷԿ-ի հյուսիսարևելյան, հարավարևելյան կողմերում (1953թ.), ԵրևանՅԷԿ-ի տարածքում (1960թ.), Արզնի երկաթուղային կիսակայարանում (1950թ.), տուֆակերտ կամար Բազում գյուղի հուշարձանին առընթեր (1985թ.), տուֆակերտ կամար Օշականում (1990–95թթ.): Աղբյուր-հուշարձաններում մոնումենտալ և գեղարվեստական միջոցներով հավերժացված է պատերազմի հերոսների սխրագործությունն ու հիշատակը: Դրանց կառուցման ավանդույթը, որ սկսվել է ճարտարապետ Ռ.Իսրայելյանի նախաձեռնությամբ և Փարաքար գյուղում այդօրինակ անդրանիկ կառույցի իրականացմամբ, տարածվեց գրեթե ողջ Հայաստանով մեկ, որում զգալի է նաև Տ.Մարությանի ներդրումը: Մարությանի նախագծած փոքր ճարտարապետական կառույցները բնութագրելի են ուղղաձիգ ուղղությամբ աստիճանավորմամբ և շեշտված գոտևորմամբ, խորշերի փորվածքների և շինարարական ծավալների հեռանկարային լուծումներով, ձևերի պլաստիկությամբ, արտահայտչականությամբ և բազմազանությամբ, հայկական միջնադարյան հորինվածքային ձևերի և գեղարվեստական հնարքների արձագանքներով, ավանդույթների նորովի դրսևորմամբ:

4. Ստեղծագործական ժառանգության գեղարվեստական հատկանիշները: ճարտարապետության գեղարվեստական կողմի կարևորումը եղել է նաև Տիրան Մարությանի ստեղծագործական մեթոդը բնութագրող հատկանիշը: Չնայած վարպետի կյանքի գործը

եղել է, թվում է թե, գեղարվեստականությունից հեռու կառույցների նախագծումը, ինչպիսիք են հիդրոէլեկտրակայանները, այնուամենայնիվ դրանցում, կարելի է ասել, տեխնոլոգիական և կոնստրուկտիվ խնդիրներից ոչ պակաս արժեքավորվել են գեղարվեստական արտահայտչականության խնդիրները:

Մարությանի ստեղծագործությունների թիվ 1 հայտանիշը՝ դա ֆունկցիոնալ և կառուցվածքային խնդիրների հետ լիովին հաշվի նստելն է: Ինչ ճարտարապետական-գեղարվեստական, ծավալատարածական, համաչափական և այլ հնարքներ էլ կիրառել է, նա առաջին հերթին հաշվի է նստել կառույցի դերառության, կոնստրուկտիվ հուսալիության պահանջների հետ: Դրա լավ օրինակը տալիս են Գյումուշի, Երևանի ՅԷԿ-երը, Երևանի նախկին կոոպերատիվ տեխնիկումի շենքը, բնակելի տները Ազատության պողոտայի և Մոսկովյան փողոցի վրա և այլն: Ճարտարապետական կառույցի ֆունկցիոնալ, կառուցվածքային և գեղարվեստական հատկանիշների համարժեք կարևորումը ճարտարապետ Մարությանի ստեղծագործական մեթոդի կարևոր կողմն է: Բացի դրանից, նրա ստեղծագործություններն աչքի են ընկնում արտաքին և ներքին հորինվածքների ներդաշն և փոխկապակցված լուծումներով: Դիտելով նրա ցանկացած ստեղծագործության ծավալատարածական տեսքը, կարելի է գրեթե անսխալ վերարտադրել ներքին կառուցվածքը: Դա վերաբերում է ինչպես նրա նախագծած հիդրոէլեկտրակայաններին, այնպես էլ քաղաքացիական և բնակելի շինություններին:

Բնական միջավայրի առավելագույն անխաթար պահպանումը և տարածքների ռացիոնալ օգտագործումը Մարությանի ստեղծագործությունը բնութագրող հատկանիշներից են: Նրա նախագծած շենքերում առավել շեշտված են և ներդաշնակորեն են դրսևորվում դեռևս անտիկ ժամանակներից պաշտվող ճարտարապետության երեք կարևոր բաղադրիչների գործառնության, ամրության և գեղեցկության միասնությունը: Դրա շնորհիվ է, որ, ինչպես նշվում է, Մարությանի նախագծած շենքերը կառուցվածքային և տեխնոլոգիական պորբլեմներ չէին առաջացնում դրանց շինարարության հետ կապված: Նաև դրա շնորհիվ է, որ արտադրական շինություններ համարվող հիդրոկայանները Մարությանի բարձր վարպետությամբ իրենցով լրացնում են բնությունը, քաղաքակիրթ դարձնում այն, հարստացնում, հաճելի երանգ հաղորդում միջավայրին: Ասվածի վկայությունն են Գյումուշի, Սևանի, Արզնու, Երևանի և այլ հիդրոկայանները, որոնք հայոց արտադրական շենքերի լավագույն նմուշներից են:

Ավանդապաշտությունը և նորարարությունը Մարությանի ստեղծագործություններում հանդես են գալիս միահյուսված,

ներդաշնակված, և դժվար է որոշել դրանց սահմանագիծը: Ավանդական շատ հնարքներին արդիական հնչողություն հաղորդելու հետ միասին, Մարությանը արմատավորել է արդի ճարտարապետության մեջ արդեն տարածում գտած գեղարվեստական և կառուցվածքային ուշագրավ ձևեր և հնարքներ, ինչպես հոծ պատի թանձրության մեջ աստիճանաբար խորացող բացվածքների շրջանակները (ՄարտունիՅԷԿ, 1936թ.), կիսաշրջանաձև լայնացող բարավորների մոտիվը (ԳյումուշՅԷԿ, 1953 թ.) և այլն, որոնցով հարստանում են ավանդական հնարքները:

Չայ ճարտարապետության ավանդույթների հիման վրա ձևավորվեց Թամանյանական դպրոցը, որի արժանավոր և արգասաբեր ժառանգորդ Տիրան Մարությանի ստեղծագործական հավատամքը դրսևորվեց նաև ճարտարապետական-գեղարվեստական կերպավորումների ասպարեզում:

Ե Ձ Ր Ա Կ Ա Ց ՈՒ Թ Յ ՈՒ Ն Ն Ե Ր

1. Բազմաբնույթ և գունեղ է ճարտարապետ Տ.Մարությանի ստեղծագործական գործունեությունն իր ընդգրկումով, բնույթով, որակական հատկանիշներով, արդյունավետությամբ: Նախագծել է շուրջ 250 մեծ ու փոքր ճարտարապետական և քաղաքաշինական օբյեկտներ, այդ թվում մի քանի տասնյակ բնակավայրերի զարգացման և վերակառուցման գլխավոր հատակագծեր, հիդրոտեխնիկական կառույցներ, բնակելի տներ, մշակութային, լուսավորական օջախներ, առողջարաններ, աղբյուր-հուշարձաններ և այլն, որոնցից շատերը մտել են հայ ճարտարապետության ընտրանիի մեջ:

2. Թեպետ բազմաժանր են Մարությանի մասնագիտական գործունեության ոլորտները, այնուամենայնիվ դրանցից մեկին՝ հիդրոտեխնիկական շինարարությանը գերապատվություն է տվել վարպետը, լինելով Չայաստանում վերջին 50 տարիներին կառուցված ՅԷԿ-երի մեծ մասի ճարտարապետության հեղինակը կամ համահեղինակը: Նա իր գործընկերների հետ կատարելապես մշակել է հիդրոկայանի շենքի հայրենական դասական կերպարը, դրանում կարևորելով Ալ.Թամանյանի ԵրՅԷԿ-ի դերը: Նրա նախագծած շենքերի հատկանշական կողմերից մեկը շեշտված կերպարայնությունն է, ինչն ակնառու երևում է հատկապես ՅԷԿ-երի, մշակույթի տների և այլ շենքերի օրինակով:

3. 1940-50-ական թթ. ստեղծված Սևան-Յրագղանի կասկադի հիդրոէլեկտրակայանների հորինվածքային կերպարը բնութագրվում է հատակագծային և ծավալային լուծումների պատճառաբանվածությամբ, համապատասխանությամբ,

մասշտաբայնությամբ, հայ դասական ճարտարապետության հորինվածքային ձևերի և հարդարանքի տարրերի կիրառմամբ, տեղանքի հետ օրգանական կապով, միջավայրի անխաթար պահպանման միտվածությամբ:

4. 1970-ական թթ. կառուցված Որոտանի կասկադի ՅԷԿ-երն իրենց կերպարով էականորեն տարբերվում են Սևան-Յրազդան կասկադի ՅԷԿ-երից: Դրանցում բացակայում են անցյալի ճարտարապետական ձևերն ու հարդարանքի տարրերը: Գեղարվեստական արժեքի կրողը դարձել են մասշտաբային, ներդաշնակ փոխկապակցված ծավալները, ճակատների ռիթմիկ, համաչափ լուծումները, զուևային, ֆակտուրային տարբեր որակ ունեցող շինանյութերի և տարրերի համադրումը:

5. Որպես կանոն Մարությանի ճարտարապետական լուծումները սերտորեն համապատասխանում են կառույցների գործառնական, տեխնիկական, տեխնոլոգիական պահանջներին, բխում են այդ պահանջներից, ինչը շատ կարևոր է հատկապես ճշգրիտ և միանշանակ գործառնություն ունեցող հիդրոտեխնիկական կառույցների համար:

6. Մարությանի կառույցների կենսունակությունը մարդուն և միջավայրին հոգեհարազատությունն է, հավատարմությունը ազգային ոգուն և ավանդույթներին: Ստեղծագործություններում ներդաշնակորեն և կատարելապես լուծված են քաղաքաշինական, ճարտարապետական, կառուցվածքային և այլ խնդիրները խորինացությամբ, արվեստով և հեռանկարայնությամբ:

7. Լինելով հայ ճարտարապետության հմուտ հետազոտող և քաջ գիտակ, նա իր նախագծային ստեղծագործություններում վարպետորեն կիրառել է հայ դասական ճարտարապետության հորինվածքային շատ ձևեր և հարդարանքի միջոցներ՝ ներկայանալով ժառանգորդական կապի հաջողված գործերով, ստեղծելով հիդրոտեխնիկական կառույցների, բնակելի և մշակութային շենքերի ուշագրավ կերպարներ:

8. Հայ ավանդական հորինվածքային ձևերին և արտահայտչամիջոցներին արդիական հնչողություն հաղորդելու հետ միասին, ճարտարապետը արմատավորել է արդի ճարտարապետության մեջ տարածում գտած գեղարվեստական և կառուցվածքային մի շարք ուշագրավ ձևեր և հնարքներ: Գարտարապետական կերպարները, մտահղացումները և մշակումները կառուցված են հիմնականում քանդակի սկզբունքով՝ դիտողական ընկալման համար մատչելի լինելով բոլոր կողմերից, լուսավորության բոլոր պայմաններում:

9. Տ.Մարությանի արվեստի կարևոր առանձնահատկությունը բազմաժանրությունն է, ստեղծագործական անհատականության դրսևորումը ճարտարապետության համարյա բոլոր ճյուղերում և ձևերում՝ քաղաքաշինական լայնածավալ կազմավորումներից մինչև

գողտրիկ աղբյուր-հուշարձանները: Մեծ է գործունեության աշխարհագրությունը. նրա նախագծած օբյեկտները գտնվում են Հայաստանի Հանրապետության գրեթե ողջ տարածքով մեկ, նաև Կարարդինա-Բալկարիայում, Գանայում:

10. Գարտարապետի մասնագիտական գործունեության արդյունավետությունը պայմանավորված է նրանով, որ նա կարողանում է վարպետորեն զուգակցել և փոխապայմանավորել մասնագիտական գործառնության և տեսական պատրաստության ոլորտները: Նա հայ ճարտարապետների ընտանիքի այն սակավաթիվներից է, որն արգասաբեր գործնական նախագծման հետ միասին, արդյունավետ կերպով զբաղվել է նաև ճարտարապետության պատմատեսական խնդիրների ուսումնասիրությամբ, հանդիսանալով մենագրությունների, մեծ թվով հոդվածների հեղինակ:

11. Մարությանի ստեղծագործական դասերը, նախագծային և գիտահետազոտական փորձը կարևոր նշանակություն ունեն ուսանողության, յուրաքանչյուր նախագծող և ԳՀ աշխատանքով զբաղվող մասնագետի համար՝ մանավանդ հիդրոտեխնիկական կառույցների բնագավառում, ինչի ակտուալությունն ու կարևորությունը այսօրվա սոցիալ-տնտեսական պայմանների համար շատ զգալի է:

ԳԼՈՒԽ 2. ՄԱՐՈՒԹՅԱՆԻ ԳԻՏԱՅԵՏԱԶՈՏԱԿԱՆ ՆԵՐԴՐՈՒՄԸ ՀԱՅ ԵՄՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՌԻՍՈՒՄԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԳԾՈՎ

Տ.Մարությանի գիտահետազոտական ներդրումը հայ ճարտարապետության գծով դրսևորվում է հատկապես երեք՝ Չվարթնոցի և զվարթնոցատիպ կառույցների, Ավանի և նույնատիպ եկեղեցիների, Տայքի հայկական ճարտարապետական դպրոցի հուշարձանների ուսումնասիրման ուղղությամբ:

2.1. *Չվարթնոց և նույնատիպ կառույցներ:* Գարտարապետ Տ.Մարությանը Չվարթնոցի եկեղեցու և զվարթնոցատիպ կառույցների ուսումնասիրությամբ զբաղվել է դեռևս 1950-ական թթ. սկզբից: Ուսումնասիրության արդյունքները գիտնականը արտահայտել է «Չվարթնոց և զվարթնոցատիպ տաճարներ» (Ե., 1963), «Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Аниийской Богоматери...» (Ե, 1989) գրքերում և 10-ից ավելի գիտական հոդվածներում: Չվարթնոցին է նվիրված Տ.Մարությանի թեկնածուական թեզը (պաշտպանել է 1968թ.):

Չվարթնոցի եկեղեցու գծով ներկայացրել է նորակազմ հատակագծեր, կտրվածքներ և կառույցի զանազան դրվագներ արտահայտող այլ գծագրեր: Տվել է հանգուցային հարցերի և կարևոր խնդիրների մոր մեկնաբանություններ:

1951 թվականից սկսած Չվարթնոցի եկեղեցու Թ.Թորամանյանի վերակազմության շուրջ սկսվեց վիճարկումների նոր շրջան: Հին և նոր վիճարկողները (Խ.Դադյան, Բ.Տեր-Սարգսյան, Ա.Կուզնեցով, Ստ.Մնացականյան) հիմնականում մատնանշում էին Թ.Թորամանյանի վերակազմության մի շարք պակասությունները և առանձին լուծումների ոչ բավարար հիմնավորվածությունը: Եղել են նաև վերակազմության նոր առաջարկներ:

Մարությանը բծախնդիր մանրամասնությամբ քննում է Չվարթնոցի հորինվածքի վերակազմության հետ կապված բոլոր խնդիրները՝ պատվանդանը, եկեղեցու առաջին աստիճանի հատակագիծը, արևելակողմի խորանը, արտաքին բոլորանիստ պատի և ներքին խաչաթևերի պատերի հաստությունները, արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի, բոլորածև վերնահարկի և սանդուխքների խնդիրը, երկրորդ աստիճանի հատակագիծը և պատուհանները, եկեղեցու բարձրությունը, կամարաթաղերը, կառուցելակերպը, կործանման պատճառները և այլ հարցեր, որոնց քննության արդյունքները հիմնականում հաստատում են, լրացնում Թորամանյանի վերակազմությունը և եկեղեցու վերաբերյալ նրա արտահայտած կարծիքները:

– հիմքեր չկան «ճշգրտելու» առաջին աստիճանի հատակագծում տրամագիծը, որն ըստ Թորամանյանի կազմում է 35.75մ,

– փաստական տվյալների հիման վրա բացառվում է արևելյան խորանը սյունաշարով պատված լինելու հնարավորությունը և հաստատվում է, որ «արևելյան խորանն ստեղծված է եղել խուլ պատով»,

– Չվարթնոցում խորանի հատակը եղել է եկեղեցու հատակից զգալիորեն բարձր,

– նախ կառուցվել է եկեղեցու բոլորակ հիմքը նաև արևելյան ուղղանկյուն կառուցվածքի սահմաններում, հետո կառուցվել են վերջինիս հիմքը և ապա պատերը միաժամանակ և միմյանց ձուլված,

– արևելակողմի ուղղանկյուն կառուցվածքի ներքնահարկի պատերի վրայի փորվածքները դեպի ներքև տանող փայտե սանդուխքների թեք հեծանների (կասաուրների) տեղերն են և փորված են համապատասխան թեքությամբ,

– պահարանների գոյությունը նույն վերնահարկի բարձրությամբ վրա՝ անվիճելիորեն հաստատում է Թորամանյանի կարծիքը եկեղեցու երկրորդ աստիճանում շրջանցող սրահի գոյության վերաբերյալ: Չվարթնոցի վերակազմության նախագծում վերնահարկի հայտնագործումը Թորամանյանի ամենամեծ գյուտն է,

– Չվարթնոցի երկրորդ աստիճանը եղել է բոլորակ-թմբկաձև մոտ 26.16մ տրամագծով, դրանով իսկ ժխտելով եկեղեցու երկրորդ աստիճանը խաչաձև լինելու վերաբերյալ կարծիքը,

– Չվարթնոցի գմբեթի ծածկը եղել է կոնաձև (ինչպես Գագկաշենի մանրակերտում (նաև Փարիզի Սեն Շապելի հարթաքանդակում),

– Չվարթնոցի եկեղեցու արտաքին պատերը Թորամանյանի վերակազմությամբ ճշգրտորեն համապատասխանում են ներքին «կմախքին», որի դեպքում Չվարթնոցի բարձրությունը ստացվում է 45մ,

– սյուներից, խարիսխներից ոչ մեկի վրա չկան ծանրության տակ ճզմվելու նշաններ, ինչը ժխտում է եկեղեցու քանդվելու պատճառը արծվախոյակ սյուների մեծ գերլարվածությունը համարելու վերաբերյալ կարծիքը,

– եկեղեցու երկրորդ աստիճանի բոլորակ պատի հնարքը կազմում է Չվարթնոցը կառուցողի մտքի փայլատակումը,

– ճշգրտել է կառուցման ժամանակը,

– ուշագրավ դիտարկումներ է կատարել Չվարթնոցի համաչափությունների վերաբերյալ,

– Փարիզի Սեն Շապել եկեղեցու հարթաքանդակում պատկերված Նոյան նավակի վրայի եկեղեցական շինությունը Չվարթնոցի եկեղեցու վերապատկերումն է,

– քանդակապատկերն ասում է, որ Չվարթնոցը եղել է եռաստիճան և բոլոր աստիճանների հիմքում ունեցել է բոլորակ ձև, այսինքն՝ այնպես, ինչպես Թ.Թորամանյանն է տվել իր վերակազմության նախագծում,

– հատակագծային, ծավալատարածական, ժամանակագրական, կառուցվածքային և այլ խնդիրների վերաբերյալ խոր վերլուծություններ է անում և արժեքավոր եզրակացությունների հանգում զվարթնոցատիպ մյուս կառույցների Գագկաշենի, Բանակի, Լյաքիթի տվյալներով:

2.2. Ավան-Չոփիսի մեծ տիպի կառույցներ: Ավանի եկեղեցու և համանուն հուշարձանների ուսումնասիրությունը մեծ տեղ է գրավում Տ.Մարությանի գիտահետազոտական աշխատանքներում: Դրանց են վերաբերում երկու մենագրությունները («Ավանի տաճարը», 1976, «Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Анииской Богоматери...», 1989), դոկտորական թեզը (1992թ.) և զգալի թվով հոդվածներ:

Ավանի եկեղեցու հատակագիծը, ըստ Տ.Մարությանի, չի ունեցել նախատիպ, հատակագծի այդ ձևը եղել է նորույթ: Կարևորը Ավանի ուսումնասիրության գծով եկեղեցու ընդհանուր ծավալատարածական հորինվածքային խնդրի լուծումն է: Դրանով հաստատվում է

Թ.Թորամանյանի կարծիքը, որ Ավանն ունեցել է հինգ գմբեթ: Նաև ցույց է տրվում, որ այն տարբերվել է 6-րդ դարի հինգգմբեթանի եկեղեցիներից իր խաչագմբեթավոր հորինվածքով: Նորույթ է նաև այն, որ ըստ Տ.Մարությանի, եկեղեցին կառուցվել է ոչ թե 7-րդ դ. սկզբին կամ 6-րդ դ. վերջին, այլ՝ ավելի վաղ, մինչև 582-584 թվականները: Նա գտնում է, որ վերակազմված եկեղեցու ճակատների և ավանդատների գմբեթարդների բարձրությունները ճշգրիտ են, քանի որ դրանց փաստական տվյալները տեղում պահպանվում են:

Ավանի ուսումնասիրության ընթացքում գիտնականը բացահայտում է Ավան-Յոթփսիմեի տիպի եկեղեցիների հատակագծերի ձևավորման օրինաչափությունների համակարգը, որն էականորեն տարբեր է մինչ այդ եղածից: Առաջարկվող համակարգի փաստարկվածությունը հիմնավորված է կոնկրետ օրինակներով:

Հինգգմբեթանի հայկական եկեղեցիների խումբը էջմիածնի Մայր եկեղեցին (ըստ Թ.Թորամանյանի), Ավանի եկեղեցին, Անիի Առաքելոցը, կառուցված համապատասխանաբար 5-րդ, 6-րդ, 10-11-րդ դարերում, կազմում են հինգգմբեթանի եկեղեցիների հայկական տիպը, որում Ավանի եկեղեցին հանդիսանում է միջին օղակ: Ըստ Մարությանի՝ Ավանի ճարտարապետը առաջին անգամ քառախորանը երկարացրեց արևելք-արևմուտք առանցքով նախախորաններ ստեղծելով արևելյան և արևմտյան ավանդատների առջևում, որոնք դարձան տիպի առանձնահատկությունը: Նաև առաջին անգամ ավանդատներ ստեղծեց արևմտյան թևում, դրանով իսկ ողջ եկեղեցին իր բոլոր հարամասերով ամփոփեց ուղղանկյուն պարագծում:

Յոթփսիմեի եկեղեցու ճարտարապետական-կառուցողական վերլուծությամբ ցույց է տրվում, որ այն ամբողջությամբ հանդիսանում է 618թ. կառույց, այլ ոչ թե արմատական վերակառուցման արդյունք է, նաև, որ նրա գմբեթը եկեղեցու կառուցմանը ժամանակակից է: Դա վերաբերում է նաև արևելյան ճակատի խորշերին, որ գրականության մեջ ներկայացվում են որպես հետագայում իրականացված: Աշտարականման փոքրիկ ծավալները ևս գմբեթին ժամանակակից են, դրանք մտածված ստեղծվել են գմբեթի կայունությունը ապահովելու համար:

Արամուսի եկեղեցու շինարարությունը, ըստ Տ.Մարությանի, պետք է ավարտված լիներ մինչև Ավանում հակաթոռ կաթողիկոսության հիմնումը, այսինքն՝ մինչև 590/591 թվականը, հետևապես կառուցման սկիզբը վերաբերում է մոտավորապես 583 թվականին: Արամուսի եկեղեցին համարվում է կամուրջ Ավանի և Յոթփսիմեի միջև: Սիսավանի եկեղեցուն գմբեթի թմբուկը ներքուստ ունի 8, իսկ արտաքուստ՝ 12 միստ, որի շնորհիվ թմբուկի պատերը ներքնածիզի ուղղությամբ ստացվել են զանգվածեղ և հուսալիորեն մարում են հրող ուժերը,

ապահովելով գմբեթի ամրությունը և կայունությունը: Այդ առումով Տ.Մարությանը Սիսավանի գմբեթի ձևերում տեսնում է նրան նախորդող Չվարթնոցի գմբեթի որոշ գծեր: Սիսավանի հատակագծում որոշակիորեն դիտելի է Յոթփսիմեի հատակագծային ձևերի ստեղծման սխեման, սակայն ակնհայտ են նաև շեղումները: Հիմնավորվում է, որ Գառնահովտի եկեղեցին ոչ թե 10-11-րդ դդ. կառույց է, ինչպես կարծում է Գ.Չուբինաշվիլին, այլ իր տիպի վաղագույն օրինակներից է: Նա գտնում է, որ հարավային խորանի պատուհանի եզրակալի կամարիկների մեջ փորագրված Մովսես անունը կապ ունի Մովսես եղվարդեցի կաթողիկոսի (574-604թթ.) անվան հետ, ինչը կարող է պարզություն մտցնել կառույցի թվագրման հարցում: Չորադիրի Ս.էջմիածնի և Յոթփսիմեի գմբեթային համակարգերի համեմատության տվյալները հիմք են տալիս, որ Չորադիրը վերաբերում է ոչ թե 9-րդ դարին, այլ կառուցված է 6-7-րդ դդ. սահմանագծում, Յոթփսիմեի եկեղեցուց վաղ: Չորադիրում գմբեթային փոխանցման համակարգը հին է և զարգացման մակարդակով նախորդում է Յոթփսիմեին:

Ըստ Մարությանի, ուսումնասիրությունները համոզում են, որ 10-րդ դարի կառույց համարվող Քոլատակի եկեղեցին կառուցվել է 7-րդ դարի կեսին՝ Սիսավանի եկեղեցուց վաղ: Նա հավանական կարծիք է հայտնում, որ Մոխրենիսի «Օխտը դռնի» եկեղեցին հանդիսանում է ոչ թե տվյալ տիպի առաջնեկը, այլ դրա հետագա պարզեցման արդյունքը: Քառախորան եկեղեցիների վերաբերյալ իր տեսական եզրահանգումները Տ.Մարությանը ուղեկցում է նաև Անիի Առաքելոց եկեղեցու գմբեթների, Արամուսի, Գառնահովտի, Չորադիրի, Քոլատակի, Չախմուսի, Մոխրենիսի վերակազմության առաջարկներով: Նա օգտաշատ որոնումներ է կատարել տիպի եկեղեցիների հատակագծային կառուցման կանոնների համակարգի բացահայտման համար: Դրանք էականորեն տարբերվում են նախորդներից սկզբունքի և կիրառման պարզությամբ ու տրամաբանվածությամբ: Հատակագծի ստեղծման համակարգը օգնում է եկեղեցիների կառուցման աստիճանական գործընթացի պարզաբանմանը, թվագրման ճշգրտմանը:

2.3.Խորագույն Հայքի (Տայքի) ճարտարապետական հուշարձաններ: Ճարտարապետ Տ.Մարությանը գտնում է, որ Խորագույն Հայքի ճարտարապետությունը կազմում է հայ ճարտարապետության օրգանական մասը նրա բոլոր փուլերում, որ այստեղ բարձրացվող կառույցները հիմք և նախօրինակ ունեն Հայաստանի կենտրոնական գավառներում: Հիմքում խաչածն եկեղեցիների նախօրինակ են էջմիածինն ու Հայաստանում ստեղծված խաչածն կառույցները: Իշխանում մշակվել է խորանի էքստերային ձևը սյունակամարներով, ինչը Ներսեսը զարգացնում և ստեղծում է

բոլորովին նոր տիպի եկեղեցի՝ Ձվարթնոցը, որի հորինվածքը կրկնվում է Խորագույն Հայքում Բանակի օրինակով:

Խաչածև կենտրոնագմբեթ և երկայնական եկեղեցիների հորինվածքների միահյուսումով դեռևս 6-7-րդ դարերում ստեղծվել են նոր հորինվածքներ, որոնցից մեկը Ավան-Յոփսիսի տիպն է, մյուսը Պտղոմի-Արուծի գմբեթասրահների տիպը, երրորդը Դվին-Թալինի Կաթողիկեի տիպը: Խորագույն Հայքի Իշխան, Օշկ և Խախու եկեղեցիներն իրենց հորինվածքային, ծավալատարածական լուծումով հարում են նշված երրորդ տիպին: Խորագույն Հայքում առանձնահատուկն այն է, որ եկեղեցու գմբեթը կենտրոնում չէ, այլ արևելյան կողմում: Գմբեթի և արևելյան խորանի մոտիկությունը որոշակիորեն միասնական է դարձնում ներքին տարածության այդ երկու կարևոր, գերիշխող մասերի (դոմինանտների) նշանակությունը և ներգործում ուժը: Հենց այս սկզբունքի գերակայությունն է տեսնում Տ.Մարությանը Խորագույն Հայքի կարևոր եկեղեցիներում, նրանց հորինվածքի հիմքում: Նա գտնում է, որ հայ ճարտարապետության այս առանձնահատուկ կողմն իր որոշակի արտահայտությունն է գտել արևմտաեվրոպական վերածնության շրջանի ճարտարապետության մի քանի կարևոր ստեղծագործություններում:

Արժեքավոր են Տ.Մարությանի հստակեցումները Իշխանի եկեղեցու կառուցման և կրած վերափոխությունների վերաբերյալ: Վերջիններիս ժամանակ պահպանվել են եկեղեցու սկզբնական հատակագծային և ծավալատարածական լուծումները: Իշխանի ամբողջական հորինվածքը, ըստ Մարությանի, իր անդրադարձը գտել է ոչ թե զվարթնոցատիպ եկեղեցիներում, ոչ թե Բանակում, այլ Օշկ, Խախու և այդ տիպի մյուս եկեղեցիներում: Բանակի հորինվածքի կենտրոնում սովորական խաչի փոխարեն, ինչպես Ձվարթնոցում է, ընկած է Բագարանի հատակագծային հորինվածքը: Օշկի եկեղեցու ճարտարապետական հորինվածքը մշակված է ըստ Իշխանի նախօրինակի: Տ.Մարությանը փաստական տվյալների վերլուծությամբ փաստատում է Ն.Սարգսյանի կարծիքը Խախու եկեղեցին 868թ. կառուցված լինելու մասին ի տարբերություն նրանց, ովքեր այն թվագրում են 10-րդ դ. կեսով:

Քննության առնելով Խորագույն Հայքի մեծ թվով հուշարձաններ, եզրակացվում է, որ այդ հուշարձանները, որոնց թվում է Իշխան, Բանակ, Օշկ, Խախու, Էգրեկ, Տայոց Քար, Իս, Սբխեչ, կառուցվել են երկրի բուն ժողովրդի հայ-լուսավորչական և հայ-քաղեկոնական համայնքների համար: Դրանց կառուցումն իրականացվել է այդ նույն ժողովրդի զավակների վարպետ-ճարտարապետների ձեռքով, Մամիկոնյանների, ապա Բագրատունյաց Տայքի ճյուղի իշխանների, թագավորների և հոգևոր պետերի պատվերով և միջոցներով: Այդ հուշարձաններն իրենց

ճարտարապետությամբ հատակագծային կազմությամբ, ծավալատարածական հորինվածքով, արտաքին հարթությունների պլաստիկ մշակմամբ, առանձին դրվագներով ու մանրամասներով ընդհանուր են, անմիջականորեն հարազատ և գերազանցապես նույնական այն ամենի հետ, որ ստեղծվել է պատմական Հայաստանի մյուս նահանգներում: Առկա տարբերություններն արգասիք են նույն ճարտարապետական ոլորտում տարբեր դպրոցների գոյության:

2.4.Այլ հուշարձաններ և խնդիրներ: Տ.Մարությանի հետազոտության շրջանակը լայն է Ձվարթնոցի, Ավանի տիպի եկեղեցիների և Տայքի հուշարձանների սահմաններից: Այդ շրջանակի մեջ է մտնում նաև Գառնիի կլոր եկեղեցին, որի ճարտարապետական հորինվածքը վերլուծում է «Գառնիի բոլորակ տաճարի ճարտարապետության առանձնահատկությունները» հոդվածում («Հայաստանը և քրիստոնյա արևելքը», Ե., 2000, էջ 217-225.): Մարությանը վերակազմել է եկեղեցին, որի հատակագծում վերանայված է գմբեթարդի քառակուսին կազմող որմնամույթերի կտրվածքի ձևը, մուտք է ցույց տրված նաև եկեղեցու հարավային կողմից, արևելյան ավանդատներում արված են կիսաշրջան խորշեր:

Հայ ճարտարապետության պատմության կարևոր հիմնահարցերից մեկը հարևան և այլ ժողովուրդների հետ հայ ժողովրդի ունեցած ճարտարապետական կապի և առնչակցության ուսումնասիրությունն է: Այդ ուղղությամբ կարևոր է Մարությանի ներդրումը. նկատի ունենք Տայքի հուշարձանների ուսումնասիրությունը և դրանց հայկական մշակույթի արժեքներ հանդիսանալու հետևողական պաշտպանությունն ու հիմնավորումը: Այդ խնդրին է նվիրված «Կեղծիքը չի կաշում հուշարձաններին» հոդվածը («Գարուն», թ. 3, 1997): Արժեքավորում է Ն.Տոկարսկու աշխատանքը և գիրքը («Архитектура древней Армении», Ե., 1946), որի մի գլուխը նվիրված է Տայքի 10-րդ դարի ճարտարապետական դպրոցին: Այդ գլխում հիմնավորելով հուշարձանների հայկականությունը, դրանք ներկայացվում են որպես հայ մշակույթի անբաժան մաս: Դա պայմանավորված է նրանով, որ Մեծ Հայքի 14-րդ նահանգ հանդիսացող Տայքը հարյուրամյակներով եղել է Մամիկոնյան իշխանական տան տոհմական ժառանգական կալվածքը, իսկ 8-րդ դարի վերջերից Բագրատունիների սեփականությունը: Ինչպես և սպասելի էր, Ն.Տոկարսկու գիրքը ենթարկվեց վրաց գիտնականների (Ս.Ջանաշիա, Վ.Բերիձե) քննադատությանը:

Աղբյուրագիտական և պատմաբանասիրական լայն հենքի վրա Տ.Մարությանը կատարում է Սանահինի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակի քննությունը, որին անդրադարձել է երկիցս՝ «Սանահինի Ամենափրկիչ եկեղեցու սյունակամարաշարի

իրականացման ժամանակը» («Պատմա-բանասիրական հանդես», 1999, ք. 2-3, էջ 306-310) և «Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու կառուցման ժամանակի հարցի շուրջ» («ՊԲՀ», 2001, ք. 1, էջ 190-201) հոդվածներում: Տ.Մարությանը վիճարկում է Հ.Խալփախյանի կարծիքը սյունակամարաշարի կառուցումը մինչև 980-ական թթ. հասցնելը: Կարևոր եզրահանգումն այն է, որ սյունակամարաշարը իրականացվել է բուն եկեղեցու կառուցման հետ միաժամանակ, այլ ոչ թե 980-ական թվականներին: Արժեքավորում է այն, նշելով, որ «Արևմտաեվրոպական գիտնականների կարծիքով Ամենափրկիչ եկեղեցու կամարաշարն ունի ճարտարապետական-գեղարվեստական մեծ, Հայաստանի սահմաններից շատ հեռու դուրս - եկող նշանակություն: Մասնավորապես... որ այն հանդիսանում է Ռավեննայի ճարտարապետության նախօրինակներից մեկը» («Սանահնի Ամենափրկիչ եկեղեցու սյունակամարաշարի իրականացման ժամանակը», էջ 310):

Հայ ճարտարապետության կապի խնդրին Տ.Մարությանը անդրադառնում է «Գոթակա»-ն, թե հայ-գոթական ճարտարապետական ոճ» հոդվածում («Գարուն», 1997, հուլիս): Փորձում է բացահայտել այն ուղիները, որով հայ ճարտարապետության ընձեռումները թափանցել են Եվրոպա:

«Գիրք թղթոց»-ն ու Սցխեթայի խաչը» հոդվածում («Գիտություն է տեխնիկա», 1968, ք. 5, էջ 44-52) պատմաբանասիրական և աղբյուրագիտական նյութերի հիման վրա քննում է Ջվարի եկեղեցու ժամանակագրության հետ առնչվող խնդիրները, ճշգրտում կառուցման ժամանակը:

Անիի Մայր եկեղեցու հետ կապված մի շարք խնդիրների (շինարարական արձանագրություն, նորոգումներ, ժամանակ և այլն) քննությունը տեղ է գտել ճարտարապետի «Архитектурные памятники: Звартноц, Аван, Собор Ани́сской Богоматери...» գրքում (Ե., 1989): Հստակեցնում է, որ իր ներկա վիճակով հուշարձանը 10-րդ դարի վերջի կառույց է, այլ ոչ թե 13-րդ դ. սկզբի արմատական վերակառուցման արդյունք: Եկեղեցու շինարարական արձանագրության տվյալները, կառույցին ժամանակակից պատմիչ Ասողիկի տեղեկությունները արժանահավատ են և անհերքելի: Եկեղեցու հատակագիծն արդյունք է հայ ճարտարապետության զարգացման որոշակի փուլի: Արտաքին պատերի որմնակամարները հայ ազգային ճարտարապետության ստեղծագործական նվաճումների արգասիք են, դրանք ոչ մի չափով կապված չեն քաղկեդոնականության հետ: 12-13-րդ դարերում այդ մոտիվի օգտագործումը, հանդիսանալով Անիի 10-11-րդ դդ. ճարտարապետության մեծ նվաճումների վերածնունդը, կապված է նոր ժամանակի պահանջների հետ:

Տ.Մարությանը Տայքի հուշարձաններից նվիրված բառահոդվածներ է գրել Հայկական սովետական և Հայկական համառոտ հանրագիտարաններում (Բանակի եկեղեցի, Շատրբերդ, Տայոց Քար, Տանձուտ, Օրթուլի, Օշկավանք), որոնցում հատկապես շեշտում է նրանց պատկանելը Տայքի միջնադարյան ճարտարապետական դպրոցին և հայ ժողովրդի մշակույթի մաս լինելը:

2.5. *Տ.Մարությանի ներդրումը հայ միջնադարյան կառույցների համաչափական համակարգում:* Ավան-Հոփսիմեի տիպի հուշարձանների համեմատական ուսումնասիրությամբ Տ.Մարությանը հիմնավորել է, որ դրանցում գոյություն ունի համաչափական կապ ամբողջի և առանձին մասերի միջև, որը ժամանակի ընթացքում ստացել է կանոնիկ բնույթ: Մասնավորապես դա վերաբերում է «ոսկե հատման» հարաբերության հետ Ավանի եկեղեցու հիմնական չափերի ունեցած կապին: Նման հարաբերությամբ են Ավանի եկեղեցու երկարությունը և լայնությունը, խորանների (արևելյան և հարավային) լայնությունը, անկյունային սենյակների և 3/4 խորշերի տրամագծերը, հատակագծի կարևոր այլ մասեր և դրվագներ:

Ըստ Մարությանի, Ջվարթնոցի տիպի եկեղեցիների համաչափությունները բացահայտող սխեմաներում կիրառված են շրջանագիծը, ուղիղ և թեք ցանցերը, «ոսկե հատման» հարաբերությունները՝ երբեմն առանձին-առանձին, երբեմն միասին, միաժամանակ:

Տ.Մարությանը իր ուսումնասիրած հուշարձաններում, բացահայտելով շատ օրինաչափություններ և համաչափական կապեր, ուղղակիորեն կարծիք չի հայտնում դրանք նախնական մտահղացման արդյունք լինելու, նախագծի կամ մանրակերտի գոյության մասին, սակայն նրա հայտնաբերած օրինաչափություններն այնքան պատճառաբանված են, որ «հուշարձանների վայելչության և գեղագիտական», նաև կոշտության գործոններով թելադրված լինելով հանդերձ, հիմք են տալիս կարծելու, որ նախնական մտահղացման արդյունք են, հավանական դարձնելով հետազոտողների այն մասի կարծիքը, որոնք գտնում են, որ միջնադարյան կառույցներն իրականացվել են նախապես մշակված նախագծերի կամ մանրակերտերի հիման վրա:

2.6. *Տ.Մարությանի իրապարակախոսական աշխատանքը ճարտարապետության բնագավառում:* Նախագծային և գիտահետազոտական աշխատանքի հետ միասին Տ.Մարությանը ճարտարապետության ոլորտին վերաբերող մեծ թվով իրապարակախոսական հոդվածների հեղինակ է: Դրանք հիմնականում նվիրված են հայ ճարտարապետության հուշարձանների պահպանության, վերակազմության, վերականգնման, արժեքավորման,

պրոպագանդան և այլ հարցերին: Այդ հրապարակումներում մեծ չափով արժեքավորվում են հատկապես Չվարթնոցի հետ կապված խնդիրները, որոնք հիմնականում վերաբերում են նրա վերականգնմանը և պահպանությանը: Ըստ Մարությանի, Չվարթնոցի վերակազմության թորամանյանական նախագիծը՝ անկախ դրա վիճարկումներից, միանգամայն հավաստի է և, Թ.Թորամանյանի խոսքերով ասած, հիմնված «հաստատուն փաստերի վրա», որը միանգամայն հնարավորություն կարող է տալ եկեղեցին ամբողջությամբ վերականգնելու: Դրանք քննվում են Մարությանի «Չվարթնոցի կործանման պատճառները» («Գիտություն և տեխնիկա», թ. 4, 1966), «Չվարթնոց» («Գարուն», թ. 5, 1980, էջ 48–56), «Չվարթնոցի վերակազմության հարցի շուրջ» («Կուլտուր–լուսավորական աշխատանք», թ. 1, 1987, էջ 25–29), «Կիսավեր պատեր ավերակի փոխարեն» («Գրական թերթ», 12 օգոստ., 1988) հոդվածներում:

«Գրական թերթ»-ի «Յյուսիսային պողոտա» հոդվածում (1954, օգոստ. 18) Տ.Մարությանը ներկայացնում է իր նկատառումները Յյուսիսային պողոտայի հորինվածքային լուծման վերաբերյալ: Նա գտնում է, որ Յյուսիսային պողոտային պետք է տալ ոչ թե լայնահուն փողոց–պողոտայի, այլ պողոտա–պարկի դեր: Ցանկալի կլինի, որ պողոտա–պարկի առանցքի աջ ու ձախ կողմերում իրենց ծավալներով աստիճանաբար մեծանան ու մշակմամբ հարստացնեն ճարտարապետական այն փոքր ձևերը, որոնք կուղեկցեն անցորդներին: Նաև կարևոր կլինի, որ պողոտա–պարկի եզրերում բարձրացող շինությունները գնալով «հեռանան», միջավայրին տան պուրակ–հանգստավայրի, դիտավայրի, քան թե փողոց–անցումի դեր: Այդ դեպքում երկու կողմերի միմյանցից զգալի «հեռացած» կառուցապատումը օրգանապես կծուլվի հարևան թաղամասերին:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Տ.Մարությանի տեսական աշխատությունները չեն սահմանափակվում պատմագրական–փաստագրական շրջանակներում: Որպես կանոն դրանք հղի են սուր հարցադրումներով, նորովի մեկնաբանություններով, խնդիրների անկողմնակալ և անկանխակալ քննությամբ, մեկնաբանությամբ: Շոշափված թեմաները արդիական են, հետազոտված հուշարձանները հիմնականում անմատչելի կամ դժվարամատչելի, կնճռոտ, վիճելի, հակասական խնդիրներով լի, բայց կարևոր հայ ճարտարապետության պատմության և տեսության համար:

2. Չվարթնոցին նվիրված իր անդրանիկ մենագրությամբ և մեծաթիվ հոդվածներով Մարությանը զգալիորեն հարստացրել է և լրացրել հայ ճարտարապետության գլուխգործոցի իմացության թերին, նոր փաստերի հայտնաբերմամբ և վերախմաստավորմամբ արժեքավոր եզրահանգումներ է անում եկեղեցու սկզբնական տեսքի թորամանյանական տարբերակի հիմնավորման և ճշգրտման վերաբերյալ:

3. ճարտարապետի գիտական ժառանգության մեջ ծանրակշիռ տեղ ունի Ավան–Յոփսիմեի տիպի կառույցների գծով հետազոտական աշխատանքը: Լրացնելով Ավանի եկեղեցու պակասող գծագրերը, Մարությանը զգալիորեն հիմնավորեց Թորամանյանի կարծիքը՝ եկեղեցու հինգգմբեթանի լինելու և հինգգմբեթանի կառույցներում միջանկյալ տեղ գրավելու վերաբերյալ:

4. Շարունակելով հայ ճարտարապետության հետազոտող Ն.Տոկարսկու սկսած գործը, Մարությանը շոշափելի ներդրում կատարեց Տայքի հայկական հուշարձանների ուսումնասիրության, դրանց ժամանակագրական ճշգրտման ուղղությամբ, որի արդյունքներն ամփոփվեցին «Տայքի ճարտարապետական հուշարձանները» (1972թ.) և «Յայ ճարտարապետության հուշարձաններ. Խորագույն Յայք» (1978թ.), «Յայ դասական ճարտարապետության ակունքներում» (2003թ.) մենագրություններում:

5. Մարությանին բնութագրող հատկանիշներից է հավատարմությունը թորամանյանական ավանդույթներին ոչ թե տարերային հետևողությամբ և նրա դրույթները կրկնելու առումով, այլ գործնական հետազոտական աշխատանքի արդյունքներով նրա կարծիքները և եզրահանգումները խորացնելու, ճշգրտելու, հիմնավորելու առումով:

6. Կարևորելով Մարությանի գիտահետազոտական աշխատանքներում արտահայտված կարծիքներն ու եզրահանգումները, նկատենք, որ դրանց մի մասը դեռևս կարիք ունի խորացման և ճշգրտման (Չվարթնոցի կործանման պատճառները, Գղանսկի պատկերասրահի նկարում Չվարթնոցի պատկերումը, Չվարթնոցի և Բոսրայի եկեղեցու կապը, Ավանի հինգ գմբեթանի լինելու խնդիրը, կենտրոնական Յայաստանի հուշարձանների հետ Խորագույն Յայքի հուշարձանների մի մասի կապի խորացման անհրաժեշտությունը և այլն):

1. Հ.Մելիքսեթյան, Հրազդան գետի վրայի ջրանցույց-կամուրջը, Գիտ. աշխ. ժող., ճարտարապետություն, քաղաքաշինություն, ԵՃՇՊՀ, Ե., 2000. հ. 1, էջ 69-70:
2. Հ.Մելիքսեթյան, ճարտարապետ Տիրան Մարությանի ներդրումը Ձվարթնոցի թորամանյանական վերակազմության մեջ, Տարեգիրք, ճարտ., քաղ., շինար., Գիտ. աշխ. ժող., ԵՃՇՊՀ, Ե., 2001. հ. 2, էջ 90-91:
3. Հ.Մելիքսեթյան, Վաստակով և իմաստությամբ ծանրաբեռ, «Տեղեկագիր Հայաստանի շինարարների», Ե., 2001, 11 (64), էջ 24-25:
4. Հ.Մելիքսեթյան, Հայաստանի ՀԷԿ-երի գլխավոր ճարտարապետը, Գիտ. աշխ. ժող., ԵՃՇՊՀ, Ե., 2003. հ. 2, էջ 60-61:
5. Հ.Մելիքսեթյան, ճարտարապետ Տիրան Մարությանի գեղարվեստական հավատամքը, Գիտ. աշխ. ժող., ԵՃՇՊՀ, Ե., 2003. հ. 2, էջ 62-64:
6. Հ.Մելիքսեթյան, Հայ ճարտարապետության հետազոտման ակունքներում, «Գիտություն և տեխնիկա», 2003, ք. 8, էջ 10-14:
7. Հայ ճարտարապետության վարպետները, Տիրան Մարության (Կյանքին և գործունեությանը նվիրված կատալոգ), կազմողներ Հ.Մելիքսեթյան, Ա.Բաղալյան, Մ.Մինասյան, Գ.Շախկյան, ՀԵՄ, Ե., 2002:

МЕЛИКСЕТИАН АСМИК АРШАЛУЙСОВНА
ТВОРЧЕСКОЕ НАСЛЕДИЕ
АРХИТЕКТОРА ТИРАНА МАРУТЯНА

Диссертация посвящена анализу и оценке работ по архитектурному проектированию и исследованию архитектурных памятников, выполненных доктором архитектуры, заслуженным строителем РА Тираном Марутяном. Работа выполнена на основании методики комплексного исследования и критического анализа материала.

Обследованы и оценены рамки, обхват и результаты композиционных достоинств проектированных объектов, творческих подходов, новых качеств, достижений в сфере образности построек, их современной направленности, особенности применяемых градостроительных, художественных, конструктивных решений творческой и научной деятельности Тирана Марутяна.

Архитектурные решения построек, проектированных Марутяном, соответствуют их функциональным, техническим и технологическим требованиям, вытекают из них, что характерно для особенно точно и однозначно функционирующих гидротехнических сооружений. Применяя композиционные формы и средства отделки армянской классической архитектуры, являющиеся удачными примерами связи наследственности, создавались примечательные образы гидротехнических сооружений, жилых и культурных зданий.

Выявлены внедрения и новизна по исследованию церкви Звартноц и сооружений типа Звартноц, церквей типа Аван-Рупсиме, армянских архитектурных памятников Тайка.

Открытием и переосмыслением новых фактов Тиран Марутян сделал ценные выводы по обоснованию и уточнению тораманяновского варианта первоначального образа Звартноца. Он значительным образом обосновал мнение Тораманяна о пятикупольности церкви в Аване. Продолжая дело, начатое Н.Токарским, Марутян сделал значительное внедрение по обнаружению особенностей и уточнению времени создания памятников Тайка.

Оценены место и значение творческого наследия Тирана Марутяна в практике и теории армянской архитектуры, художественные особенности творческого наследия, его внедрения в обнаружение пропорциональных связей в композиции средневековых архитектурных сооружений, публицистической работы в области знаний, сохранения и пропаганды гидротехнических сооружений и архитектурных памятников.